

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Գաղաքական կուսակցութիւններն յեւրոպայ
 և յԱմերիկայ (Գ.) Բ. Գ.
 ԳՐԱԿԱՆ. Յուշք իմ. ՍՐԲՈՒՀԻ ՏԻՒՍԱՐ
 ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՕՏՈՒԹԻՒՆՔ. Կանանց դերը բնկերութեան մէջ Տ. ԵՆՈՍՈՒՖԵԱՆ
 ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ. Առաստաղ. (ԱԼՖՐԷՏ ՏԸ ՄԻՒՍԷ) Թարգմ. Ե. Զ.
 ՔԱՂՈՒԱԾ ՇԱԲԱԹԱԿԱՆ ԼՐՈՑ. Արտաքին, Ներքին, Ազգային
 ՍԻՄՕՆԷՆ ԵՒ ՄԱՐԻ. (ԿԶԱՎԻԷ ՏԸ ՄՕՆԹԵԲԷՆ) Թարգմ. Մ. ԶՊԱՆԵԱՆ

ՊԱՅՄԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ ԵՒ ԳԱԼԱՐՆԵՐՈՒ	— տարեկան	 Կէս ոսկի Օսման.
»	վեցամսեայ	 Բառ » »
ՄԷԿ ԹԵՐԹԻՆ ԳԼԻՆ Է		60 փարայ
Օտար քաղաքաց համար տարեկան		12 ֆրանք
»	վեցամսեայ	 6 »
Թղթատարութեան ծախք տարեկան		Բառ արծ. 15
վեցամսեայ		» » 7 1/2

Մասիսի խմբագրութեան ուղղեալ ո՛ր եւ է գրութիւն կամ նամակ պէտք է
 ուղղել առ

Խմբագրութիւն Արեւելք և Մասիս Լրագրաց
 Ղալաթիա, Նորատուրքեան խան

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔՂ ԼՐԱԳՐՈՑ

1884

ԴՐԱՄԱԿԱՆ

ՂԱԼԱԹԻՈՑ ՊՈՐՍԱ

Ղալաթիա, 26 Հոկտեմբեր

ԸՆԹԱՅՔ ՓՈԽԱՆԱԿԱԳՐՈՅ

3 ամիս Լոնտրայի վրայ (պանքային)	110
3 » » » (վճռահան)	109 5/4
3 » Բարիի » (պանքային)	22 90
» » » (վճռահան)	22 97 1/2

ԸՆԹԱՅՔ ԱՐԺԵԹՂԹՈՅ

Օսմանեան Բոսնիայի

Երեկ երեկոյ գոցուեցաւ (Գ. Կ.) ԴՏԿն	8 37 1/2
Պորտային գոցուեցաւ վերջը » »	8 36
Բերայի մէջ » »	8 36
Առաւօտուն բացուեցաւ » »	8 35 1/2
Բարձրագոյն գին » »	8 35 1/2
Նուազագոյն » »	8 32
Կէս օրին » »	8 32 1/2
Իւնիֆիէ Եգիպտական »	74 15
Երեկ իրիկուն գոցուեցաւ »	73 15
Բերայի մէջ »	73 5
Այս առտու բացուեցաւ »	73 5
Կէս օրին »	73 5
Հէվալէսիլ »	20
Բերք գոնայի տէր »	—
» Իւնիֆիէ »	—
Փոխառութիւն 1863 (Գ. Կ.) »	72
» 1865 »	56
» 1869 »	50
» 1873 »	45
Պոն տիւ Թրէզոր »	21
Բոլմէլի երկաթուղի »	44 50
Օպիկասիոն տը Բրիտիթ »	—
Բաժնեթուղթ Լաւրիսմի »	77

ԲԱԺՆԵՏՈՐՍՔ

Սօսիթէ Ժէնէրալ »	3 32
Քրէտի Ժէնէրալ (Գ. Կ.) »	7 2
Պանք տը Գոնս »	5 30
Սոս. Շանտէ վալէօր »	3 25
Թրամուէյ »	282 1/2

Ընթացք դրամոց

Օսմանեան ոսկի »	400
20 Ֆրանքնոց »	87 38
Անգլիական ոսկի »	110 13
Բոլ Իմպերիալ »	90 12
Քրիմից »	51 22
Ռուսկի թղթադրամ »	8 85
» արծաթ »	89 30
Ֆիօրին »	9 —
Մէճ. արծ. (տարբ.) »	107 38
Վ. Եցնոց »	103 5
Հինգնոց »	103 10
Մէթայիք »	99 20
Պղինձ »	800
Թղթադրամ »	3000

ԵՐԻՈՊԱԿԱՆ ՊՈՐՍԱ

Լոնտոն, 6 Նոյեմբեր ժամ 5 վայր. 15 Երեկոյ

Անգլ. քոնսոյիտէ գոցուեցաւ	100 3/8
Օսմն. բացուեցաւ	8 1/4
» » գոցուեցաւ	8 1/8
Օսմն. փոխառութիւն 1865	11 1/4
» » 1869	9 7/8
» » 1871	68 1/2
» » 1872	19 1/2
» » 1873	8 3/4
Փոխառութիւն 1877	81 1/2
Պանք Օթօման »	13 1/8
Ռուսական փոխառ. 73 (Գ. Կ.) »	94 3/4
Եգիպտական միացեալ (Իւնիֆիէ) »	(անընթեռնի)
» առանձն. (բրիտիթ) »	(անընթեռնի)
Տայրա Սանիէ »	62 3/4
Տօմանիալ (փոխառ. Բօշիլտ) »	90 1/4
Հունգարական պարտաթուղթ 1877 »	102 1/2
Փոխառութիւն Բարիքի վրայ »	—

Վիեննա, 6 Նոյեմբեր ժամ 4 Երեկոյ

Փոխառութիւն Լոնտոնի վրայ »	122 40
Օսմանեան երկաթուղի »	21 60
Բարիլ, 6 Նոյեմ. ժամ 3 վայր. 15 Երեկոյ	
Ֆրանսական Ռանթ 4 1/2 0/0 »	108 40
» » 3 0/0 »	78 70
Օսմանեան քոնսոյիտէ բացուեցաւ »	8 35
» » գոցու. (Գ. Կ.) »	8 25
» » 1865 »	—
» » 1869 »	50
» » 1873 »	44
Օսմանեան երկաթուղի »	45 62 1/2
» Բէտիի բաժնեթուղթ »	522 50
Պանք Օթօման »	581 25
Գրէտի Լիօն »	525
» Ֆոնսիէ »	1300
Բաժնետոմս Լիօնի (գուր. կար.) »	1237 50
Սուէզի ջրանցք »	1912 50
Ռուսական 5 0/0 1877ի »	99 3/8
Իտալական Ռանթ »	96 80
Եգիպտական միացեալ գոց »	335
Սպանիական (արտաքին) »	59 1/8
Բրիտիթ Թիւրք »	383 75
5 0/0 Հելլենական »	362 50
Զէք Լոնտրայի վրայ »	25 28

ԲԱՐԻՋ ԲԹԻԹ ՊՈՐՍԱ

Նոյեմբեր 6 Ժ. 10, Վ. 30

Ֆրանս. Ռանթ, 4 1/2 0/0 »	107 85
Օսմանեան »	8 20
Եգիպտական միացեալ »	333 75

Մ Ա Ս Ի Ս

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

33 ՐԴ ՏԱՐԻ

1884 ՀՈԿՏԵՄԲԵՐ 27

ԹԻԻ 3741

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐՆ
ՑՆԻՐՈՊԱ ԵՒ ՑԱՄԵՐԻԿԱ

Փ.

ԱՆԳԼԻՍ

«Անգլիական քաղաքականութիւնը շահե-
րու քաղաքականութիւն մ'է»։ Այսպէս կ'ըս-
ուի սովորաբար Մեծին Բրիտանիոյ արտաքին
աշխարհավարութեան մրայ։ Բայց այդ խօսք
այնչափ ճիշդ է, որ կը պատշաճի նաեւ Անգ-
լիոյ ներքին աշխարհավարութեան։ Անգլիոյ
պետական մարդիկ և քաղաքագէտք կը խօսին
միշտ յանուն մեծամեծ սկզբանց։ Միջինե-
րու և ժողովներու մէջ կը սիրեն ներկայա-
ցնել զիրենք իբրեւ մէկ մէկ մեծ դադա-
ւարի առաքեալներ։ Բայց իրենց բոլոր կու-
սակցական կռիւներ հիմնեալ են շահերու
մրայ։ Ուրիշներու կը թողունք նկարագրել
Քրոմուէլի, Ատամ Սմիթի, Բիդելի, Քանին-
կի, Ռոպերդ Բիլի, Պայրընի, Պըքլի, Հէլ-
պերդ Սթենսլըի և Կլատտոնի հայրենիքն
իբրեւ ռազմիրայն եւրոպական քաղաքակրթ-
ութեան և ազատութեան։ Ներկայ յօդ-
ուածին մէջ, մեր միակ նպատակն է նկա-
րագրել Անգլիան իւր գործնական կողմի
ներքէն՝ իւր ներքին աշխարհավարութեան
ընթացքն և կուսակցութեանց շարժումները
բացատրելով շահերու տեսութեամբ միայն։
Նւ նախ, բառի մը բացատրութիւն։ Նրբ

կը խօսինք շահերս՝ վրայ, զայս բառ պէտք
չէ առնուլ մեր մէջ դժբախտապէս սովորա-
կան դարձած իմաստովն։ Հանրային, վար-
չային կամ քաղաքական բարոյականութիւնը
կամ պարկեշտութիւնն ո'չ ուրեք այնչափ
բարձր է և մաքուր, որչափ յԱնգլիա։ Նթէ
վաճառական մը կրնայ յոյժ գործնական և
միանգամայն պարկեշտ մարդ մը լինել, ազգ
մ'եւս կարող է իւր քաղաքական գործոց
վարչութեան մէջ գործնական բայց պար-
կեշտ լինել։ Օրէսդի իշ Դհի պէտք է ըսել,
Պարկեշտութիւնը լաւագոյն քաղաքականու-
թիւնն է, կ'ըսէ անգլիական առածն, որ
յոյժ կը պատշաճի այս ժողովրդեան կա-
ռավարող դասուց անհատական և հանրա-
յին ընթացքին։ Անգլիացի քաղաքագէտք,
որք անխափր Համալսարանէ ելած մարդիկ
են, հոն ստացած են մատենագրական (քա-
ռ) և քրիստոնէական այնպիսի բարձր կըր-
թութիւն մը, որ քաղաքական աշխարհի մէջ
չեն մաներ լոկ իբրեւ շատ մը բաներ գիտ-
ցող քառասոր Ժեմայներ, այլ մանաւանդ իբ-
րեւ մէկ մէկ զօրաւոր անհատականութիւն-
ներ, աթենական և հռոմէական վաղեմի
պատուական կաղապարի մը վրայ ձուլուած
տոկուն բնաւորութեամբ մը օժտեալ։ Ասոր
հետ միանալով Անգլիացւոց գործնական
ողին ու սրամտութիւնն, արտադրած են
ժամանակակից հանրային կամ պետական
մարդու կատարելագոյն տիպն, որ անգլիա-
կանն է անշուշտ։

Բայց այդ մը կ'ապրի նիւթական շահե-
րով։ Քաղաքականութեան հիմն իսկ է ա-
պահովել այս շահեր։ Անգլիացի պետական
մարդիկ, որք օտար ազգաց հետ խնդիր չեն
յարուցաներ իւր դադաւարի կամ սկզբունքի

մը համար, այլ հայրենեաց նիւթական շահերուն ապահովութեան համար միայն, իրենց ներքին խնդրոց մէջ եւս պարզ գաղափարէ մը կամ սկզբունքէ մը առաջ կը փոխառեն նիւթական բարեկեցութեան շահերն ա՛յն ժողովրդային դասուց, որոց ներկայացուցիչներն են իրենք: Այսպէս իրենց բոլոր քաղաքականութիւնն շահերու քաղաքականութիւնն մ'է միշտ. բայց անձնապէս ո՛չ մէկ անգլիացի աշխարհավար իբրեւ կաշառակեր կրցած է առճաստանուիլ, մանաւանդ ժամանակակից պատմութեան մէջ: Այլ Ռոպէրդ Բիլ ծայրայեղ պահպանողականութենէ յարած է չափաւոր ազատականութեան. Պ. Կլատտըռն նմանապէս ծայրայեղ պահպանողականութենէ տակաւ յարած է ծայրայեղ ազատականութեան կամ արմատականութեան. Պ. Տ'Իսթրայէլի (Լորտ Պիքոնֆիլտ) արմատականութենէ յարած է պահպանողականութեան. վերջապէս, այժմեան Լորտ Տէրպիլ լքած է պահպանողական կուսակցութիւնն և Պ. Կլատտըռնի կուսակցութեան մէջ մտած: Բայց այս և ուրիշ ո՛չ մէկ աշխարհավարի վրայ կրցած է երբեք ըսուիլ թէ «ոսկւոյ կամ այլ նիւթական ակնկալութեան փոխարէն կարծիք կը փոխէ»: Ինչպէս Անգլիոյ դատաւորաց անկաշառութիւնը, նոյնպէս Անգլիոյ պետական մարդոց պարկեշտութիւնն առածի կարգ անցած են, և օտարազգեաց կողմէ եւս ընդհանրապէս ճանչուած և գնահատուած իրողութիւններ են: Անգլիա այս նկատմամբ հաւասարապէս զերծ է Ռուսիոյ նման ծայրայեղ պահպանողական երկրի մը և Միացեալ Նահանգաց պէս ծայրայեղ ազատական երկրի մը մէջ տիրող հանրային բարոյականի շատ մը տեսակի զեղծումներէ:

*
* *

Անգլիոյ մէջ տիրող կուսակցութիւնը երկուք են, Ազատականը և Պահպանողականը: Ասոնք տիրող են. զի եթէ մին իշխանութենէ իյնայ, միւսը կը բռնէ նորա տեղը: Կայ երկուրորդ փոքր կուսակցութիւն մը, իռլանդացի Ինքնավարականներն: Երեսփոխանաց թիւը դնելով 650 հոգի, այժմեան Երեսփոխանական ժողովոյ կազմութիւնը սա է, վեր ի վերոյ. 540 Ազատական, 240 Պահպանողական և 70 Ինքնավարական: Երկու

մեծ կուսակցութիւնները կը ստորաբաժանին երկու որոշ խմբակներու, թէեւ նշանաւոր պարագայից մէջ միշտ ի միասին կը գործեն և կը քուէարկեն կուսակցութեան մը զանազան խմբակներն: Ազատականաց մէջ է Արմատական խմբակն, որ ծայրայեղ ազատական կարծիքներ ունի: Պահպանողականներն ալ կը բաժնուին հին և նոր երկու դպրոցներու:

Ընդհանրապէս խօսելով, Պահպանողական կը ներկայացնեն ազնուականաց, կղերականաց և հողատէրոց շահերն:

Ազատական կը ներկայացնեն մեծ և փոքր արհեստաւորաց, հողագործաց և գործաւորաց շահերը:

Ինքնավարական կը ներկայացնեն իռլանդացի բնիկ կամ կաթոլիկ ժողովրդեան շահերն:

Եւ որպէս զի շահերու ներկայացումը կատարեալ լինի, մէն մի Երեսփոխան կը ներկայացնէ՝ նախ և առաջ՝ այն քաղաքի կամ գաւառի շահն, որոյ կողմէ ընտրուած է: Ընդհանրական խնդրոց մէջ, անշուշտ ամենքն ալ Անգլիոյ Երեսփոխաններն են: Բայց Անգլիոյ ամբողջ կառավարութիւնը կեդրոնացած է Երեսփոխանաց Ժողովոյն մէջ, որ նոյնչափ կը զբաղի հանրային խնդիրներով, որչափ մասնաւոր և տեղային շահերով:

Դիւրին է հասկնալ թէ այն շահեր զորս Պահպանողականը կը ներկայացնեն, իրապէս պահպանողական գաղափարաց պաշտպանութեան կը կարօտին: Ազնուականութիւնն իւր ծագմամբ և յարակից պայմաններով հակառակ է դարուս ազատական գրութեանց: Բայց պահպանողականութիւնն անգլիական բնաւորութեան իսկ մէկ մասը կը կազմէ, և այս պատճառաւ, գէթ առ այժմ, ընդհանուր համամտութիւն մը կ'երեւի պահպանելու ազնուական դասը: Սակայն պէտք է զանազանութիւն մը դնել ազնուականաց մէջ: Լորտեր կան որք իրենց իրաւունքները լաւագոյնս պաշտպանել կը կարծեն՝ ժողովրդեան յենով, և հետեւապէս ջատագուրվելով անոր իրաւունքներն: Ասոնք են ազատական ազնուականներն, որք փոքրամասնութիւն կը կազմեն ազնուական դասուն մէջ: Պահպանողական Լորտերն առաւել անհաշտ գաղափարներով տողորուած

են, և չիտակը գրուցելով, ասոնք աւելի անկեղծ են. զի կա՛մ պէտք է դադրիլ ազնուական անունը կրող առանձնաշնորհեալ դասու մը պատկանելէ, և՛ ժողովրդեան իրաւունքները պաշտպանելու համար՝ մտնել ժողովրդական դասուն մէջ իսկ, կա՛մ պէտք է ազնուական մնալ՝ պաշտպանելով այսպիսի ինքնուրոյն դասու մը բոլոր առանձնաշնորհումները: Ֆրանսացիք այս նկատմամբ ստուգիւ առաւել տրամաբան ընթացք մ'ունենցած են՝ միանգամ ընդ միշտ ջնջելով ազնուականութիւնն, այնպէս որ այսօր Հանրապետականը անպատուութիւն կամ ծանծաղամտութիւն կը համարին կրել ազնուականութեան տիտղոսներ, մինչ արքայական և կայսերական կուսակցութիւնք խնամով կը պահեն զայնս:

Ար հասկցուի նաև թէ Անգլիոյ Աղերականը կը կարօտին՝ գրէթէ առանց բացառութեան՝ պահպանողական դասուն պաշտպանութեան: Անկլիքան Եկեղեցին Անգլիոյ մէջ աւանդապահն է նախկին լատին Եկեղեցւոյ առանձնաշնորհմանց, որոց մի մեծ մասը կը կենայ դեռ այսօր: Այս առանձնաշնորհումներ են նիւթական (եպիսկոպոսական կալուածներ, իրաւունքներ, եկեղեցական տուրքեր), և բարոյական, (անգլիացի ժողովրդեան դպրոցաց մի մեծ մասին հսկողութիւնն, և այլն): Ազատականը, մանաւանդ յառաջացեալ մասը, կը հանդիմանայ այս կրեւային առանձնաշնորհմանց, մինչ Պահպանողականը կը պաշտպանէ զայնս: Բայց Ազատականը արդէն քանիցս հարուածներ տուին այս առանձնաշնորհմանց: Օրինակի համար. 1870ին Պ. Կլատտոն դադրեցուց Անկլիքան Եկեղեցին իւլիանայի մէջ Պետական Եկեղեցի լինելէ, զի հոն ժողովրդեան ստուար մեծամասնութիւնն է կաթոլիկ: Պահպանողականը իրենց բուն դերը կատարեցին՝ ջերմապէս պաշտպանելով, բայց ի զուր, այն նիւթական և բարոյական մեծամեծ շահեր, զորս անկլիքան կղերն այս կերպիւ կը կորուսանէր քոյր-կղզւոյն մէջ:

Վերջապէս, Պահպանողականը պաշտպաններն են հողատեարց շահուն: Աղետականը ընդհանրապէս մեծամեծ կալուածներ ունին: Անաթոլիոյ աշխարհական տիպ մը չէ սովորաբար: Հողատիրութիւնը կը ներկայացնէ ազնուականութեան տնտեսական

կողմն: Արդ, Անգլիոյ հողատիրական դրութիւնն հակառակ է այժմեան ազատական գաղափարաց: Երկրին հողերուն մեծագոյն մասը քանի մը տասնեակ մեծ կալուածատեարց ստացուածքն է: Արկայի Դուքսն հիւսիսային Սկոտլոյ և Նորթֆոլքի Դուքսն հարաւային Անգլիոյ մէջ մէկ մէկ գաւառի ընդարձակութեամբ հողեր ունին: Անդրանկոնէան իրաւունքն էւս, որով այս լայնատարած կալուածներ չեն կրնար բաժնուիլ հողատեարց զաւակներուն միջեւ, այլ ամբողջութեամբ կ'անցնին անդրանիկ որդւոյն, և այսպէս դարէ ի դար կը պահեն իրենց ամբողջութիւն, միջնադարեան օրէնք մ'է, զոր ջնջեց Ֆրանսական մեծ Յեղափոխութիւնը, հաստատելով ընդհանուր հաւասարութիւն, յորում կը բովանդակի նաեւ հօր մը զաւակաց հաւասարութիւնը նորա թողած ժառանգութեան առջեւ: Այս սլատառաւ, Ֆրանսայի մէջ չկան այնպիսի մեծամեծ կալուածատեարք, բայց ա՛նք Ֆրանսացի ունի կտոր մը հող: — Ազատական օրէնսդրութիւնն, առանց ի հիմանց բառնալու մեծ-կալուածատիրութիւնն յԱնգլիա, չափաւորեց և կանոնադրեց անոր այլ և այլ իրաւունքները, փոխադարձաբար աւելցնելով ազնուականաց հողերը մշակող վարձակալաց և հողագործաց իրաւունքներն: Առ այս միշտ կը հակառակին Պահպանողականը, և յայտնի է այսպէս թէ կը կատարեն իրենց ճշմարիտ դեր:

* * *

Ազատականը սովորաբար կը պաշտպանեն երկրագործաց, գործաւորաց և մեծ ու փոքր արհեստաւորաց շահերն: Այս շահեր հիմնովին կը տարբերին ազնուականութեան, կալուածատիրութեան և կղերին շահերէն, որք կրնան նոյաստաւորուիլ դարերէ հետէ շարունակուող օրինաց կիրառութեամբ, մինչ ժամանակիս պահանջմանց և տնտեսական ու ընկերային դիտութեանց պայմանաց համեմատ, օրինական փոփոխութիւններ կը պահանջեն միշտ երկրագործ, գործաւոր և արհեստաւոր, մանաւանդ ճարտարարուեստ դասուց շահերն: Օրինակի համար. 40-50 տարի առաջ բոլոր Անգլիա վեր ի վայր կը յուզուէր և քաղաքային պատերազմի մը ամեն նշանները ցոյց կուտար՝ հաջ մեծ խնդրոյն պատճառաւ: Հացը սուղ էր, և խորին

Թշուառութեան մէջ ընկղմած էին ժողովրդեան մանաւանդ ստորին դասերը, թըշուառութիւն որոյ վրայ մեք Թուրքիոյ բնակիչքս դժուարաւ կրնանք դադարաւ մը կադմել. զի թէեւ թշուառութիւնը շատ դժընդակ ձեւեր կը ստանայ մեր մէջ, բայց ո՛չ Ա. Պոլսոյ ո՛չ ալ գաւառաց մէջ լոկ անօթութենէ մեռնողներ չկան, մանաւանդ սովորական ժամանակներ: Դժոխքն ի կառավարութիւնը, մեծ կալուածատեարց ազդեցութեան ներքեւ, ծանր մաքսեր դրած էր օտար երկիրներէն բերուած արմատեաց վրայ, որպէս զի Անգլիոյ մէջ արտադրեալ հողագործական բերքեր սուղ վաճառին և կալուածատեարք մեծ շահեր բնեն: Հետեւապէս, թէ՛ օտար և թէ՛ բնիկ ցորենով պատրաստուած հացը շատ սուղ էր: Բարձր մաքսեր դնելու քաղաքականութիւնն ո՛չ եւս կը պատշաճէր ժամանակին փոխութեալ պայմանաց. զի ժողովուրդը բաղմնացած էր, և մեծ մաս մը հողագործութենէ տարբեր ճիւղերու մէջ կ'աշխատէր, և լաւ աշխատելու համար աժան և առատ սնունդի պէտք ունէր: Առաջին անգամ Ազատականք պահանջեցին ընկերային այս մեծ աղէտի դարման տանիլ՝ կիրառութեամբ Ատամ Սիթի տընտեսագիտական սկզբանց, այն է՝ ընդունելով ազդաց մէջ աղատ-փոխանակութեան վարդապետութիւնն, որով երկիր մը անմաքս կամ յոյժ թեթեւ մաքսով մը կ'ընդունի ինչ որ աւելի աժան և առատ կ'արտադրի ուրիշ երկրի մը մէջ, և փոխադարձապէս անմաքս կուտայ ինչ որ ինք կ'արդէ աժան և առատ արտադրել: Աշխատութեան բաժանման սկզբունքն է այս՝ մարդկային մեծ ընկերութեան մէջ: Ըստ այսմ, Ազատականք ազդեալ պահանջեցին ցորենի վրայ դրուած մաքսերու ջրնջումը: Կալուածատեարք և ազնուականք շատ հակառակեցան, և ի վերջոյ յախաճայ տեղի տուին, երբ տեսան թէ սովատանջ ժողովուրդը պիտի զլիմէր ծայրայեղ միջոցներու:

Առանց աղատ-փոխանակութեան սկզբան, որ նախնական և անտաշ կամ չը գործուած նիւթերու դիւրագնի ստացումը կարելի ըլլաւ, անգլիական արհեստք և տնտեսագործութիւնը չպիտի կրնային երբեք հասնիլ այժմեան բարգաւաճման: Եւ

իրողութիւն մ'է թէ, աղատ-փոխանակութեան սկզբունքէն բխած օրէնագրութիւնն իւր ամբողջութեամբ՝ Անգլիա կը պարտի Ազատականաց: Վաճառականութեան և արհեստից մեծ կեդրոններու մէջ Ազատականք գորաւոր են. զի վաճառականաց և արհեստաւորաց նիւթական շահերուն աւելի կը յարմարին ազատական վարդապետութիւնը:

Հողագործ աշխատաւորաց մասին եւս այսպէս է: Հողատիրութեան պայմանք նախկին աւատականութեան մնացորդ լինելով, հողագործաց շահերը դիտմամբ զոհուած էին կալուածատեարց շահերուն: Հողային օրինաց բարեփոխումներն Անգլիա կը պարտի Ազատականաց, որք այսպէս շահած են հողագործաց քուէները:

Բայց, ընդհանրապէս խօսելով, ուր որ դրամանոց և ընչաւէտ դասուց շահերը կը բախին աշխատաւոր դասուց շահերուն, առաջինք ոյժ կուտան պահպանողական կուսակցութեան, որ՝ ստացեալ իրաւանց պահպանման վարդապետութիւնը ջատագովելով՝ կը յարմարի իրենց շահերուն. իսկ վերջինք եւս առաւել կը յարին ազատական կուսակցութեան, որ՝ ընկերային հաւասարութեան վարդապետութեան գործութեամբ աւելի տրամադիր է հաւասարապէս պաշտպանելու գործաւիրոջ և գործաւորին շահերն և առաւելապէս տիրապետելին պաշտպան կանդներու: Հետեւապէս, գործարանատեարք, նաւայարդարք և հանքատեարք, որք մեծ շահեր կը ներկայացնեն, և յոյժ օգտուած են ազատական վարդապետութեանց կիրառութենէն, շատ անգամ կը տեսնուին Պահպանողականաց կողմն, երբ լուրի թէ ազատական նախարար մը կը մտաբերէ նոր օրէնք մը հաստատել գործաւորներու կամ նաւաղներու նիւթական փնձակը բարելաւելու համար:

* * *

Ինքնաշխատականք (Հօմ-Ֆ-ւ-ւ-ւ) Իռլանտայի անկախութիւնը կամ ինքնօրինութիւնը կը պահանջեն: Կուգեն որ վերահաստատի 100 տարի առաջ ջնջուած Իռլանտական Խորհրդարանն, որ ի Տրալլին կը գումարուէր, և Իռլանտայի վերաբերող ամեն ներքին խնդիրները վճարար տնօրինէ. իսկ օտար տէրութեանց հետ յարաբերութեան և բանակի

ու նաւատորմի մասին Իւլանտա կապուած մնայ Անգլիոյ հետ : Այս վերջին վերապահութիւն չափաւոր ինքնավարականաց խորհուրդն է, մինչ նոյն կուսակցութեան ոչ խորհրդարանական և ծայրայեղ մասն, որ Ֆէնիանութիւն կը կոչուի՝ Ֆէնիան անուն իւլանտացի հաշակաւոր Ֆեդափոխականին անուամբ, կը փափաքի բոլորովին անկախ տեսնել Իւլանտան :

Իւլանտացի ցեղն Անգլիոյ Միացեալ Թագաւորութիւնը բաղկացնող երեք ցեղերուն (բրիտանացի, սկոթացի և իւլանտացի) մէջ ամենէն վերացականն ու բանաստեղծականն է : Երեւակայութիւնը շատ զօրաւոր է Իւլանտացւոյն քով, որ իւր պատմութեամբ, լիրօնքով և աւանդութեամբք անոյժ միտքիկականութիւն մը ժառանգած է իւր նախահարցմէ : Բայց երբ Պ. Բառնէլի կուսակցութիւնն Իւլանտայի համար ինքնօրինութիւնը կը պահանջէ, լոկ գաղափարի կամ զգացումի խնդիր մը չէ այս : Նիւթական բառեկեցութեան խնդիրը մեծադոյն բաժինն ունի այդ պահանջման մէջ :

Իւլանտայի բնակչաց ամենամեծ մասն հողագործ է : Իւլանտայի մէջ հողատիրութիւնը բացառիկ հանդամանք մ'ունի : Երբ Գրոմուէլի հրամանաց ներքեւ Անգլիացիք «քոյր-կղզին» արշաւեցին՝ ապստամբութիւն մը նուաճելու, և արեան մէջ խեղդեցին այդ շարժում, կղզւոյն թուրը հողերը գրաւեցին և բաժնեցին իրենց մէջ : Երկրի մը հողերուն տէր լինել՝ նոյն երկրի բնակիչները նուաճելու ազդուագոյն միջոցն է. զի տնտեսական միջոցներով ապահովեալ տիրապետութեան մը քով բազդատապէս անգոր կը մնան լոկ վարչային կամ գինուորական միջոցներով ապահովեալ տիրապետութիւնը : Իւլանտայի հողերն եղան բաժին անգլիացի բախտախնդիրներու, որք ապա աղնուականութեան մէկ մէկ տնտես ստացան : Իսկ կղզւոյն բուն բնակիչք իբրեւ ստորուկ մշակ ենթարկեցան այս օտարազգի հողատեսարց իշխանութեան : Իւլանտայի այժմեան հողատեսարք մեծադոյն մասամբ սերունդ են այդ անգլիացի երկրակալաց : Հետեւապէս, կը տեսնենք որ այժմ իւլանտացի հողատեսարք կը պատկանին օտար ցեղի մը, իսկ բոլոր մշակներն եւ վարձակալները՝ բնիկ ցեղին :

Նթէ իւլանտական Խորհրդարան մը գումարի Տըպլինի մէջ, և բաղկանայ՝ ժողովրդեան բաշխամարդութեան համեմատ՝ թէ՛ մշակներու և թէ՛ հողատեսարց կողմէ ընտրուած Երեսփոխաններէ, Պ. Բառնէլի կուսակցութիւնը քիչ ժամանակի մէջ կը լուծէ իւր հայրենեաց մեծադոյն խնդիրը, զայս հողային խնդիր : Անգլիական Խորհրդարանը չի հաւանիր ջնջել անգլիական հողատիրութիւնն յիւլանտա . չի հաւանիր հողատէր ընելու ամեն իւլանտացի հողագործ : Երկրին կարեւորագոյն հարստութիւնք այսպէս կը մնան օտար ցեղի մը ձեռաց մէջ . իսկ իւլանտացի մշակն, անբաւական ապրուստ մը գտնելով, զի երկիրն արեւելեան երկրի մը պէս արգաւանդ չէ, կը նեղուի, կը տառապի, և կը պարտաւորի Ամերիկա գաղթել : Արդարեւ, Ազատականք, իրենց վարդապետութեանց զօրութեամբ, մերթնդ մերթ մասնական գոհացումներ տուած են Իւլանտացւոյ : Բայց պահպանողական կուսակցութիւնն ընդհանրապէս և Լորտերու ժողովը մասնաւորապէս, որ կը բաղկանայ՝ մեծադոյն մասամբ՝ իւլանտացի և անգլիացի կալուածատէր աղնուականներէ, միշտ հակառակած են հողային քիչ մ'ընդարձակ փոփոխութեանց : Հաւանական չէ որ մօտաւոր ժամանակի մէջ իրականութիւն գտնէ Պ. Բառնէլի փափաքը . բայց եթէ Իւլանտայի ազգային Խորհրդարան մը հաստատուի, բռնիկ ժողովրդեան տնտեսական վիճակին մէջ յեղափոխութիւն մը կրնայ յառաջ բերել, աւատականութեան մնացորդ օտար կալուածատիրութեան մը ջնջմամբ :

*
* *

Յոյց տալու համար թէ, Անգլիացիք ա՛յնչափ գործնական մարդիկ են որ լոկ գաղափարի մը կամ վերացական սկզբունքի մը համար չեն յուզուիր, և թէ՛ երբ կուսակցական սաստիկ կռիւներ կը տեսնենք՝ անոնք ներքեւ նիւթական չօչափելի շահեր պարտինք որոնել, կրնանք յիշել Անգլիացւոյ այժմեան մեծադոյն խնդիրն, որ բոլոր երկիրն երկու ահագին բանակներու բաժնած, կուսակցական և ժողովրդական մեծադոյն ոյժեր իրարու դէմ կը յարուցանէ, յանուն Ընդհանուր Իրաւացի Միացումը :

Պ. Կլատտոն առաջարկեց Երեսփոխան

Ընտրելու իրաւունք տալ իբր երկու միլիոն անձանց, ընտրողութեան պայմաններն այնպէս իմն լայնցնելով, որ հողագործներու, գործաւորներու, դրագիրներու և սպասաւորներու նոր դասեր՝ իրենց դաղափարաց ամենէն աւելի համակերպող Երեսփոխանին քուէ կարենալ տալու ձեւոյն ներքեւ՝ այսուհետեւ ազդեցութիւն կարենան ունենալ օրէնսդիր մարմնոյն որոշմանց վրայ:

Ի զօր է միթէ երբ այս ամեն դասեր կը յուզուին և՛ իրենց աւուրչէքը թողած՝ ցոյցեր և ֆէթնիներ կը կազմեն, օր առաջ ստանալու համար Ազատականաց Պետին ծրագրած իրաւունքն: Եթէ այս երկու միլիոն հողագործը, գործաւորը, և այլն, իրաւունք ունենան ներկայացուցիչներ զրկելու Երեսփոխանական Ժողովոյն, կրնան իրենց նիւթական բարեկեցութեան չահուց նպաստաւոր օրէնքներ քուէարկել տալ, և դժուարացնել քուէարկումն աշխարհի օրինաց որք հողատէր, գործարանատէր և ընչաւէտ դասուց միայն են չահաւոր: Այս հզօր դասեր, որք ֆէթն դաս հաւաքական անուամբ կը կոչուին, երբեմն նմանապէս յուզուեցան և կուռեցան ազնուական կամ ասպետական դասուն դէմ, որոյ կերպիւ իւր մենաշնորհն էր Խորհրդարանին մէջ բազմելու իրաւունքն, և այսօր միջին դասու ներկայացուցիչը մեծամասնութիւն կը կազմեն Երեսփոխանական Ժողովոյն մէջ, որ հետեւապէս շատ նպաստաւոր է ընչաւէտ և դժրամատէր դասուց չահերուն: Բայց մի եւ նոյն նպատակներով, այսօր «ֆէթն դաս» կը փափաքի ձայն ունենալ Երեսփոխանական Ժողովոյն մէջ, և երբ յաջողի, անտարակուսելի է թէ աւելի դիւրաւ ձեռք պիտի բերէ իւր նիւթական բարեկեցութեան այն ամեն պայմաններ վրայ Խորհրդարան մը կարողութիւն ունի որոշելու: Այս տեսութեամբ, Ընտրական Երեսփոխանի իրենց դիրքը բոլոր այն հոգեւորական զարդերով հանդերձ որովք ամեն առթիւ կը զարդարուի իւր պերճախօս պաշտպաններու կողմէ՝ պարզապէս հաջի ֆէթն մ'է երկրին երկու միլիոն բնակչաց համար, որք քաղաքական իրաւունքէ զուրկ էին ցարդ: Պահպանողականաց և Ազնուականաց համար ալ հաջի ֆէթն մ'է՝ հակառակիլ ցմիշտ այս պահանջման:

*
* *

Անգլիական Պետութեան ղինանչանին վրայ արձանագրուած է Նորմանտական արշաւանքէն մնացած սա Փրանսերէն բանաձեւ. «Տիէօ է մօն Տրօա», Աստուած և Իրաւունք:

Իբրեւ նշանաբան անգլիական ազգին, այդ ղինանչան այսօր յոյժ իրաւամբ կրնար զրուիլ սապէս. «Տիէօ է մօն Էնդէրէ» . Աստուած և Ի՞նչ Դահն:

Ջերմապէս քրիստոնեայ և Ջերմադոյնս չահատէր, ա՛յս եղած է և է անգլիական բնաւորութիւնն, և յա՛յտմ գուցէ պարտինք որոնել Մեծին Բրիտանիոյ մեծութեան մեծագոյն գաղտնիքը:

Բ. Ք.

Ի ՅԻՇԱՏԱԿ ՍԻՐԵԼԻ ՄՕՐՍ

ՏԻԿԻՆ ՆԱԶԼԸ ՎԱՀԱՆ

Հետեւեալ յօդուածը թէպէտ ընտանեկան շրջանակի պատկանեալ է, սակայն ի նկատի առնելով թէ՛ հանդուցեղոյն համբաւն և թէ՛ Ազնուահի Տիկին Տիւսաբի գլուխական տաղանդն, օգտակար համարեցինք զայն հրատարակել երբ Ազնուահի Տիկին Տիւսաբի և խմբագրութեանս բարեկամներէն միոյն մօտ զայն տեսանք:

ՅՈՒՇՔ ԻՄ

Ա.

Արձանագրեմ սիրոյ տառիւք մօրս սըրբանուէր անունը սրտիս յիշատակարանին մէջ, զի մայր էր եղական, մայր պաշտելի և փարելի:

Մինչ մանկիկ էի հայրս մեռաւ. որք մընացի, սակայն որբութիւն չճանաչեցի, այնչափ մայրս բոլորովին սէր էր և անձնութեան ինքն Դա երկու զաւակացը համար կ'աւարէր, զի ո՛չ հաճոյք, և ո՛չ բաղձանք ունէր իւր անձին համար: Մեր ուրախութեան, տխրութեան, կամ ըրձից արձագանք կուտար. նուրբ թեւ մ'էր որ որդւոցն ցնցմամբ ուժգին ձայն կուտար: Ի՞նչ զոհեր չկատարեց

մեզ համար, և սակայն բնաւ ակնարկութիւն չըրաւ բոլոր կենացը մէջ իւր անձնութեաց դործողը: Նա մատուցած ծառայութեանցն նկատմամբ յիշողութիւն չունէր. պարզեւածը կը մոռնար, ընդունածը յիշելու համար միայն: Իւր մայրենի սիրոյն հետ ի պայքար կը մտնէր միայն այն անսահման զգացումը հիքացելոց օգնելու, և գիտութեան լոյսը մեր ազգային մութ խաւերուն մէջ տարածելու:

Մօրս սիրաւ սիրոյ անսպառ ուրիշ մ'էր. բայց խաղաղ ուրիշ մի, առանց փութորկաց և առանց շունդի. միօրինակ կ'ընթանար իւր գեղեցիկ և վճիտ մակերեւոյթին վրայ զմեզ ընդ յառաջ մղելով:

Տարիներ անցան, ժամանակը քայլեց, ես եւս մայր եղայ, և սակայն անձս տղայ կը կարծէի երբ մերձ էի մօրս, այնքան գորովով կը չընկալատէր զիս: Ար վայելէի ի մեծ հաճոյս մայրենի գողարիկ սիրոյ մենաշնորհն, և երկիւղիւ կը մտածէի թէ ի՞նչ պիտի ըլլար վիճակս եթէ օր մի յանկարծ մայրս իւր անխուսափելի տուրքն առ մահ վճարելու պարտական ըլլար: Ար դարհուրէի այդ մտածութեան առջեւ, և այդ սեւ հաւանականութեան գաղափարն ինձմէ հեռացնելով զներկայն կը վայելէի լիաթոր, մէն մի խնդութիւնս, ցաւս, յոյսս, երազներս մօրս հաղորդելով, և անոր հոգւոյն սիրասուն հայելոյն մէջ զգացմանցս պատկերները կրկին անգամ պատկերացած տեսնելով: Ար վայելէի ներկայն, և մէն մի անգամ որ «մայր» անունը կը հնչէի, կարծես թէ արհամարհանաց յանդուգն ձայն մի կ'ուղղէի ապագային: Ո՛հ, ապագայն կը լռէր, բայց կը պատրաստէր ինձ այն սոսկալի հարուածն որ զէութիւնս համայն դղրեց:

Բ.

Աեանքս հանդարտօրէն կը սահէր ընտանեկան անդորրաւէտ յարկին և մայրենի սիրոյն հովանւոյն ներքեւ:

«Մայր, կ'ըսէի, քանի՞ օն քաղցր է քեզ նման եղական ծնողը մ'ունենալ»:

«Որդեակ, կը պատասխանէր համեստութեամբ, ինձ նման է ամեն մայր»: Եւ ես անհամբերութեամբ կը յարէի. «Եթէ տե-

տածիս ու դատածիս վրայ պիտի հիմնեմ կարծիքս՝ ըսածդ տարակուսելի է ինձ: Արդարեւ մայրութիւնը սիրոյ և անձնութեան հանք մ'է, բայց առաւել կամեաւ ընտիր տեսակէ չի՞ կրնար դոյանալ այդ հանքն արդեօք»:

Երբեմն երբ նա իւր մահուան ակնարկութիւն կ'ընէր՝ ես սոսկալով կ'արգիլէի իրեն խօսքն յառաջ տանելու: «Ի՞նչ, կ'ըսէր վարհուրելով, կ'ուզես որ ե՞ս դատաւարտութիւն քու վրադ լալու: Դո՛ւստր իմ, մտածէ՛ բարձրացող անգթութեանը վրայ: Բնութիւնը լաւ կարգադրութիւն մ'ըրած է աշխարհէս դուրս ճանբորդելու առաջնութիւնը ծնողաց վերադրելով»: Եւ ես նեղանալով զինքը կ'ընդհատէի, չուզելով անսալ իւր խորհրդածութեանց որք սրտիս ճանր հարուած մի կուտային:

Մինչ տարիները կը դիպուէին մօրս ըստ պիտակ գլխուն վրայ, անոնց ծանրութիւնն զհոգիս կը ճնշէր, ու մէն մի անգամ որ տալի մի եւս կը բոլորէր՝ ինքնիրենս կ'ըսէի. «Բաղդը պարզեւեց ինձ զմայրս այս տարին նաեւ. իցի՛ւ թէ յաջորդին մէջ նոյնը կարենայի ըսել»:

Երբ մարդս կենաց դադարին կը մօտենայ՝ մէն մի քայլ վտանգաւոր կը հանդիսանայ, զի նա իւր անձնական ոյժը կորուսած ըլլալով՝ սխալ կամ տկար քայլ մի զայն դիւրաւ կը վիժէ կենաց բերանաբաց վճին մէջ: Երկիւղիւ կը նայէի այդ դադարին և կը մտածէի թէ մինչև անոր կատարին մօրս սահմանուած էր հասնիլ արդեօք:

Մինչդեռ մայրս ուղին կը շարունակէր ամրապինդ՝ յանկարծ քայլերը դեղեւեցան. ընդհարկանելով բիրտ արդեւքներու զորս իրեն հեղինակած էր վաղաժամիկ մերձակայ սիրելեաց մահը: Մեծ եղաւ անոր կրած ցնցումը, սարսափելի եղաւ հետեւանքը մեզ համար:

Ո՛հ, մօրս կեանքը յստակ և գեղեցիկ լի՞ծ մ'էր որուն հանդարտ և չողջողուն ջուրերը կը նսեմանային ստէպ մահուան թուխ պատկերներով:

Գ.

Տարի մի բոլորեցաւ այն աղետալի օրէն ի վեր յորում ժանտ մահը ներկայացաւ իւր

հարուածը իջեցնելու մօրս պաշտելի գլխուն վրայ : Բայց գուցէ առաքինութեան այդ մեծ պատկերին առջեւ մահն իսկ պատկառանք զգաց , որով և իւր բազուկը տկարանալով վերջնական հարուածը տալու անկարող եղաւ , բայց սպառնալիք մի թողուց մեզ :

Իբր հսկայ ալեւոր ծառ իմն որ խորհատապանծ իւր փառազարդ գլուխը դէպ երկինք կը բարձրացնէ՝ հովանւոյն ներքեւ վրտանդի մատնուած անցորդները պատսպարելով , երբ շանթն անոր վրայէն անցնելով կը զարնէ առանց սակայն դայն ածիւնի վերածելու , բնութեան այդ կոթողը կանգուն կը մնայ , բայց զգալ կուտայ մօտալուտ վրտանդի ենթարկած ըլլալը :

Ո՛հ , երբ մօրս թեւերն և ոտքերն սկսան կորսնցնել իրենց սեփական ոյժը , ու ոչ եւս հսկատակիլ զիրենք առաջնորդող կամբքին , սիրտս արհաւրօք լեցուեցաւ , այո՛ , բայց ինձ սպառնացող ազէտից դաղափարին ոչ երբէք կարողացայ ընտելանալ : Հաւանականը սեւ մահուան սեւ պատկերը կը ներկայացնէր աչացս , և ես սակայն զայդ անկարելի կը կարծէի՝ այնչափ սիրոյ խաբուսիկ յոյսն զանցուցութիւնն անդամ դեղեցիկ գոյներով կարող է վարդարել :

Երբ մերձ էր ինձ մայրս՝ առաւօտուն անձկութեամբ առ ինքն կ'ընթանայի , և իւր դէմքին վրայ կը ջանայի կարգաւ առողջութեան վիճակը : Երբ անոր փառթարացած ըլլալը կը հաստատէի՝ հոգիս կը Թորէր սաստիկ , բայց ժպտուն յոյսը երկիւղներս կը փութար ցրուելու : Եւ երբ բարեբաւութիւն մը կը նշմարէի այն պաշտելի էակին վրայ , բողբոլմն հաւատք ու վստահութիւն էի . կ'արհամարէի մահն իսկ որ այնչափ մօտ կեցած էր սակայն : Աւա՛ղ , վշտաց վիհն ոտիցըս ներքեւ կը պեղուէր , մինչդեռ ես կը նշմարէի միայն զայն քողարկող աւօրեայ խաբուսիկ ծաղկները :

Մարդս միշտ տղայ կը մնայ իւր երազոյց , հաճոյից և յոյսերուն մէջ : Իմաստութիւնը լոկ բառ մ'է բազդատութեամբ մեր հանապազօրեայ յիմարական խորհրդոյ և գործոյ :

Դ.

Երբ ամառնային տաքն զմարդիկ քաղքէն հեռացուց դաշտաց և ծովուն զովարար

օդը մնտուելու համար , մօրմէս բաժնուելու պարտաւորեցայ : Ինքը Վոսփորայ ծովափանց վրայ հաստատուեցաւ մերձ սիրելի որդւոյն և ես դնացի Սան-Սթէֆանօ : Գրեթէ երկու շաբաթ իւր փափաքելի տեսութենէն զուրկ մնացի այլ եւ այլ պատճառներով : Վերջապէս օր մի դնացի մօրս այցելութեան . կ'սպասէր ինձ նոյն օրն , և երբ զիս տեսաւ՝ դէմքը , չարժումները , ամեն ինչ յինքն վերջապէս իւր անդուստլ ուրախութիւնը կը յայտարարէր : Հապա իմ հոգիս , իմ անձս , իմ աչերս նոյնչափ պերճախօս եղա՞ն արդեօք :

Յետ երկար կամ կարճատեւ բացակայութեան կարծեաւ սրտերը սիրոյ բովէն անցնելով կը նորոգուին . աւելի թարմ են և աւելի խօսուն : Մայրս և ես , մենք երկուքնիս աշխարհ մի կը կաղմէինք իրարու համար : Սնահամբերութեամբ իրարու հաղորդեցինք բացակայութեան միջոցին մեզ հանդիպած պատահարները , մեր զգացումները և մեր տեսութիւնները . եւ երբ կը կարծէինք թէ ամեն խօսակցութեան նիւթ սպառած էինք՝ հետզհետէ նորանորը կը բղթէին , այնչափ մտերմութեան աղբիւրէն հոսած նիւթերն անսպառ են :

Մայրս անյադ կարօտիւ ինձ կը նայէր շարունակ , և կ'ուզէր համոզել զիս նոյն դիւքերն իւր քով մնալու : «Մայր , ըսի , անհրաժեշտ է ինձ այդ , զի տղայքս երկուքնուս կ'սպասեն այս երեկոյ : Օ՛ն , պատրաստուէ՛ , երթա՛նք ի միասին » : Նա ցնծաց ի սրտէ և հաճեցաւ :

Հասաւ ժամանակը մեկնելու , ելաւ մայրս իւր սենեակէն , մնաս բարեաւ ըսաւ իւր հարսին և թողանց զօրս այնչափ կը սիրէր . մնաս բարեաւ ըսաւ , և ոչ ոք ըզգաց թէ վերջին մնաս բարեաւն էր այդ , թէ նա ոչ եւս պիտի վերադառնար յայդ վայր , թէ ոչ եւս պիտի տեսնէր զիւր սիրելիները : Նա մայրս կ'առնէի հետս կը տանէի , ես ձեռամբս , աւա՛ղ , զայն իբր զո՛հ մատուցանելու համար մահուան :

Մտանք չողենաւ , ուղեւորեցանք ցընծութեամբ Վոսփորայ զուարթ ջուրերուն վրայէն : Երբ մայրս անցաւ վերստին նոյն ջուրերէն , ո՛հ , ոչ եւս հետն էի . այլ իբր որդի , իբր համայն ինչ , միայն դադաղ մը ունէր ուր ինքը կ'ամբիփոխէր : Երբ իւր

մայրենի սէրը բովանդակելու համար ախեզերք սահմանափակ էր կարծես, իւր նուիրական մարմինը պարունակելու համար դադար մի բաւեց :

Ե.

Մտանք շողեկաւք . ընկերակից եղաւ մեզ և ամուսինս, որուն ներկայութիւնն առաւել ապահովութիւն ապրեց մօրս իւր ճանբորդութեան նկատմամբ :

Հասանք Սան-Սթէֆանօ . յաղթանակաւ կ'առաջնորդէի մօրս մեր տունն երթալու : Երկու զաւակներս մեզ ընդ յառաջ գալով ուրախաւթ աղաղակներով ողջունեցին իրենց տենչալի հիւրը : Մայրս կը ցնծայր ի սրտէ սիրոյ այդ անկեղծ արտայայտութեան համար, և մանուկները սրտին վրայ կը սեղմէր այն գորովով որ իրեն յատուկ էր միայն :

Տարի զինքն իրեն յատկացեալ սենեակը . գոհ եղաւ շատ : Առողջութեան գեղեցիկ ապագայ մի փայլեցուցի աչացն այն հաւատքով որ սեփական է սիրալիր հոգւոց : Մայրս ուշ կը դնէր խոստմանցս և կարծես ջանք կ'ընէր համոզուելու ըսածներէս :

Ահա ունէի կանաչազարդ դաշտեր, կապոյտ երկինք, ընդարձակ ծով, ընտանեկան անդորր, ունէի և մայրս, ի՞նչ կը մընար ինձ դեռ փախաբերու : Ամեն օր դուրս կ'ենէինք շրջագայելու համար : Գիւղին օդը նպաստաւոր կը թուէր մօրս առողջութեան . յոյսերս կը զօրանային, ո՛հ, ընդ հուպ սաստկադոյն եւս փչրուելու համար : Երջանիկ էի, և նոյն իսկ երջանիկութենէս կը վախնայի . և՛ յապահովութիւն անձիս՝ « Մայր, կ'ըսէի, տե՛ս որչափ լաւ ես » : « Չաւա՛կս, կը պատասխանէր, քեզ այնպէս կը թուի, բայց վիճակս նոյն է » :

Եւ այդ յուսահատ խօսքերէն նեղանալով կը կրկնէի ինչ որ հաճելի էր ինձ հաւատալ : Կը դիտէի սակայն թէ տարիէ մ'ի վեր մայրս կուրաքամակ էր, կը դիտէի թէ երբեմն քայլերը կը դեղեւէին, կը դիտէի թէ մերթ ընդ մերթ բազուկները ծոյլ էին իրենց շարժմանց մէջ : զայս ամենայն կը դիտէի, այո՛, և սակայն սիրելի էր ինձ անձս խաբել :

Եթէ մարդս չունենար յոյսն իբր անբաժանելի ընկեր, ի՞նչպէս կարելի էր իրեն

ապրիլ : Վտանգը նշմարուած վայրկեանէն ի վեր թէ հաստատուէինք անոր էութեան վրայ, մէն մի օրերնիս մահ սկիտի ըլլար մեզ համար :

Զ.

Անցան քսան և եօթն երջանիկ օրեր, յորումս զմայրս վայրէցի իբր վերջին անդին պարգեւ բաղդին :

Կիրակի առաւօտ՝ Վարդեվառի տօնն էր . նա եկեղեցի երթալու բաղձանքն յայտնեց : Երկու որդիքս և ես ուղեկից եղանք նոս : Կարծես զԱռաքինին խորանին առջեւ կը տանէինք անմահութեան հետ պսակելու պատրաստութիւններն ընելու մտօք :

Ջերմեռանդութեամբ աղօթեց մայրս . ժամերդութիւնն աւարտեցաւ, և ինքն մըտադիր չէր մեկնելու եկեղեցիէն : Երկու անգամ « Երթա՛նք, մա՛յր » կրկնելէս վերջը յանձն առաւ . սրբաւայրէն դուրս ելնելու : Գնացինք մօտակայ պարտէզի մէջ ժուռ եկանք : Հո՛ն, թեթեւ կերպիւ գլուխը դառնալով, կանգ առաւ և տեղ մի նստեցուցի զինքը : Թէեւ տարիէ մ'ի վեր վարժած էի այդ գլխուն դառնալուն, այսու հանդերձ հաճելի չթուեցաւ ինձ այն : Երբ հանդըստացաւ նա՝ տունն ընդ փոյթ վերադարձանք . անկողին մտաւ հանդ չելու համար, և հոն կեցաւ օրն ի բուն :

« Վաղը բոլորովին լաւ կ'ըլլամ, ըսաւ, դի ունեցածս ոչինչ բան է ըստ ինքեան, և մանաւանդ որ մեծ բարեւաւութիւն կ'ըզդամ » :

Այդ ապահովիչ խօսքերը զիս յանչափս կը մխիթարէին : Երեկոյեան դէմ էր, քովը նստած էի, կը խօսակցէինք, ինքը ուրախ էր և զուարթ, հետեւեալ օրուան համար խորհուրդներ կ'ընէինք : Մութն սկսաւ տիրել շուրջ՝ երբ մայրս, որ մինչ նոյն վայրկեանին եւանդեամբ կը խօսէր, յանկարծ քանի մի հազիւ իմանալի բառեր թոթովեց, ու լեզուն անշարժ մնաց բերնին մէջ միանգամ ընդ միշտ :

Ո՛հ, մայրս ոչ եւս ձայն ունէր զիս կոչելու, ոչ եւս նայուածք ինձ ուղղելու . աչքերը դոյրեցան յաւէտ, և իմ որդիական աղերսս, որդիական սէրս անկարող եղան բարբառն ու լոյսը վերադարձնելու անոր աւաղ :

Տակաւին կը շնչէր, և ես կը յուսայի: Բայց բժշկին լուսթիւնը ի պատասխանի իմ թախանձալից հարցումս, շատ իսկ կը յայտարարէր անդառնալի կորստեանս մեծութիւնը: Հաւատալի՞ է արդեօք եթէ խոստովանիմ որ տակաւին կը յուսայի երբ ոչ եւս մայր ունէի, ո՛չ եւս մայր . . . : Շունչ մի կար միայն և այդ յուսոյ երկնային դուռ մ'էր ինձ համար:

Ո՛վ յոյս, զիս խաբեցիր տարիէ մ'ի վեր. հանդերձ այսու պարտական եմ քեզ այն վայրկեաններուն համար ուր գոնէ առժամանակեայ կերպիւ յուսալ տուիր ինձ, հաւատալ տուիր ինձ, կեանք տուիր ինձ:

Է.

Ի՛նչ սոսկալի գիշեր մ'անցուցինք տըքնութեան, ցաւոյ և անձկութեան: Մայրս ամեն շարժում կորուսած էր. անոր կենդանի ըլլալը շունչ մի միայն կը յայտնէր դեռ: Արեւը ծագեցաւ զուարթ ու պայծառ ճառագայթներով տառապելոյն սենեակն ողողելով. թուէր թէ մահն իւր դառն հեգնութիւնը մեր երեսին կ'արձակէր անողորմաբար, մինչ գերեզմանին յաղթանակը եւս քան զեւս զգալի ընել կուտար մեզ: Կարծես թէ մայրս մէկ ոտքովն այս աշխարհիս վրայ կը կոխէր, մինչդեռ միւսովն յաւիտեականութեան մէջ կը մտնէր:

Նոյն օրն իւր բացակայ որդին մինչ Վոսփորայ եղերաց վրայ անկաակած էր և աներկիւզ իւր ծնողքին նկատմամբ, իբր առաւօտեան պարզեւ մօրն անհանգստութեան լուրն առնելով՝ սուրաց, հասաւ ժամանակին ո՛չ թէ աչացն յետին սիրոյ շողն ընդունելու, այլ միմիայն անոր գժուարին շնչառութեան տխուր վիայն ըլլալու համար:

Մայր, եթէ մահուան ձեռամբ սիրոյ աղբիւրն սպառած չըլլար ի քեզ արդէն, անշուշտ մայրենի գորովը հրաջք մի կը դորձէր այդ անմխիթար ուստերդ նկատմամբ որ կը տենջար գոնէ անգամ մի եւս սիրելի ձայնդ լսելու: Բայց ի դուր, ախո՛ս . . . :

Այո՛, շունչ մի կար, և ես կը մխիթարուէի, կը ջանայի յադեհալ մօրմէս, զի հէքս կը կարծէի թէ մայր մ'ունէի տակաւին: Բայց սիրատու զոր սրտի համար կա՞յ յադուրդ

արդեօք. օրուան մէջ կ'ուղէի բաւականա՜նալ երբ այսչափ տարիներէ ի վեր առաջագահանելու չկարողացայ: — Արդէն օրն ուր սէրը յադուրդ կը ճանչնայ, սէր ըլլալէ կը դադրի:

Այլ եւս տաղնապալից գիշեր մ'անցաւ: Խաւարք թուէին մահուան սեւ ստուերներն որք մօրս շուրջը դառնալով կը պատրաստուէին իրեն ուղեկից ըլլալու ի գերեզման:

Արիւն յետին անգամ մի ծագեցաւ կիսամեռ մօրս համար: Ես հանդէպ իրեն կայնած էի, և մէն մի շնչառութենէն ետքը սիրտս երկիւղիւ կը բարախէր թէ գուցէ վերջինն ըլլար այդ շունչն: Ո՛հ, մինչ առաւօտ էր տակաւին, իբր սիրոյ զեփիւռ մայրս իւր վերջին շունչն յանձնեց իմ անմխիթար և յուսաբեկ հոգւոյս:

Սիրոյ անսահման աշխարհին մէջ դատարկութիւն մի չբացուեցա՞ւ արդեօք մօրս մահուամբ:

Ը.

Մայրս մահուան անկողնոյն վրայ տարածուած էր սեւ զգեստներով: Ձեռքերը կուրծքին վրայ դրուած՝ խաչիւ կնքուած էին: Անհնարին ցաւով մերձեցայ անկողնոյն, ծունր դրի անոր մօտ, և մօրս ձեռքերն համբուրեցի. ո՛հ, մահուան ցուրտը դրաւած էր զանոնք: Առատ ծաղկներով համայն զգեստն ու գլուխը զարդարեցի. կարծես կը ննջէր Առաքիներն, այնքան հանդարտ էր իւր դէմքը:

Ո՛վ մայր իմ, կրկին և կրկին անունդ հընչեցի, բռնն սիրովս անշարժ մարմինդ ողորդեցի. բայց սէրն անգամ մահուան պատնէշին առջեւ անպօր մնաց անոր դէմ փռուելով: Այո՛, սիրտս բարբառեցաւ վըշտահար զգացման ամենայն պերճախօսութեամբ. բայց ի՞նչ օգուտ, ո՛հ, ի՞նչ օգուտ. մահը կանգուն կեցած էր ընդ մէջ մօր և զաւկին, և նա միայն կարող եղաւ բաժնել զմեզ, զանբաժանելիները:

Սեւ մխիթարութիւն մ'էր ինձ համար տեսնել զմայրս նոյն իսկ մահուան դոգին մէջ, տեսնել զինքն անշարժ և անշունչ, բայց վերջապէս տեսնել այն դէմքը զոր սովոր էր պաշտել այնչափ ժամանակէ ի վեր: Սակայն նոյն իսկ այդ դառն անօրինակ շատ

համարուեցաւ, զի յափշտակեցին, առին, տարին ծնողքս, և ես մնացի առանց մօր. և ես կ'ապրիմ առանց քեզ, ո՛վ մայր իմ:

Երկի՛նք, ի՛նչ յուսահատական դատարկութիւն շուրջս բացուեցաւ: Երբ արտասուեալ թոր աչքս կը ջանայ անոր խորը թափանցել՝ հո՛ն կ'ընդունարեմ պատկեր մի միայն որ խոյս կուտայ ինձմէ:

Մայր, ինչո՞ւ խոյս կուտաս. ոչ ե՞ս եմ քու դուստրդ, ոչ ե՞ս եմ քու սիրելիդ, ոչ ե՞ս եմ քու անբաժանելիդ:

Հոգի՛դ իմ, ի զուր կ'ողբաս, ի զուր կը գանգատիս. խոնարհէ՛, զի գերեզմանը յաղթեց սիրոյ:

Թ.

Եւ այո՛, ի զուր շուրջս կը նայիմ, մայր, ի զուր զքեզ կ'որոնեմ. ու երբ կը յիշեմ թէ ոչ եւս պիտի տեսնեմ զքեզ, կարծես թէ միտքս կը ցնորի:

Ո՛հ, ինչո՞ւ սիրտ մ'ունենալ, ինչո՞ւ սիրել, եթէ սահմանուած ենք մեր որբացեալ սիրոյն վրայ ողբալու: Ինչո՞ւ սրտին բարախումները փութացնել եթէ անոր չարժուումները պիտի կասեցնենք: Ինչո՞ւ հրաման ընել սրտին ապրելու եթէ զայն մեռնելու պիտի դատապարտենք: Ո՛վ բնութիւն, ո՛րչափ անիրաւ են քու օրէնքդ. կարծես խորթ մօր պաշտօնը կը վարես սրտի նկատմամբ:

Ամիս մ'անցաւ այն զարհուրելի օրէն ի վեր ուր բերանս մայր անունը հնչելէ դադարեցաւ. և սակայն քանի՛օն քաղցրալուր է այդ անունը: Ամիս մ'անցաւ, մայր, և ես չայցելեցի տակաւին քու սուրբ գերեզմանիդ: Գուցէ քու թախծեալ հոգիդ հարցնէ անձկանօք. « Ընդէ՞ր դուստրս կը յապաղէ իւր արտասուք իմ ցուրտ հողս ջերմացնելու մոռցած զիս արդեօք »:

Հանգիստ եղիր, մայր իմ, պատկերդ պաշտելի կանգուն է յաւէտ հոգւոյս պատուանդանին վրայ: Բայց այնչափ լացի, այնչափ տառապեցայ, այնչափ տկարացայ որ անկարող եմ արդ երթալ մինչեւ ի Վոսիօր ուր դու կը հանդչիս մերձ քու սիրելի կենակցիդ: Եթէ տեսնէիր իմ այլակերպեալ կերպով անքս, անտարակոյս յանչափս պիտի ցաւէիր զիս թողած ըլլալուդ համար: Եւ սակայն ամեն ճիղ կը թափեմ զօրանալու

համար, որպէս զի ժամ յառաջ կարողանամ առ նոր տխուր կայանդ ընթանալու, և հո՛ն . . . : Ո՛հ, կը ցնորի՞մ արդեօք եթէ հաւատամ թէ որդիական ճայնս մօրս գոհունակութեան և գորովոյ բաբախում մ'աղդելու զօրութիւնը պիտի ունենայ:

Ո՛վ Սէր, ընդէ՞ր լիազօր չես իբրեւ զմահ. ա՛յն տապանները կը փակէ, և դու տապանները կը բանայիր, ու կը ներկայացնէիր աչացս յայնժամ այն փարեւի պատկերը զոր չգիտեմ ուր գտնել . . . :

Ստոյգ է, մայր, որ ի մեկնելդ աշխարհէս սերտ սիրոյ առարկայներ թողուցիր ինձ ի մխիթարութիւն վշտահար հոգւոյս: Բայց չգիտէի՞ր արդեօք թէ քեզ նման մօր մի թողած պարտով մայր մի միայն կրնայ լեցընել, չգիտէի՞ր զայդ արդեօք: Երանի՛ թէ չըլլայիր այնչափ ծնողք եզական, ու չվարժեցնէիր զիս այնչափ անձնուրաց սիրոյ քաղցրութեանց, զի այժմ վիշտս ոչ այսչափ անսահման կ'ըլլար, և թողած դատարկութիւնդ ոչ այսչափ սարսափելի:

Թ.

Երբ վերջին անգամ ուղեւորեցայ Վոսիօրայ շողշողուն ալեաց վրայէն, ո՛րչափ ուրախառիթ էր ճանբորդութիւնս: Մայրս ինձ հետ էր յայնժամ, զինքն ի մեր բնակարան կը տանէի: Իսկ արդ երբ նոյն ջուրերուն վրայէն անցայ՝ կոհակը զմեայլ կը թաւալէր ինձ համար: Մէն մի շարժում չողենաւին սրտիս բաբախումը կը փութացնէր, զի կը մօտենայի այն սրբավայրին ուր մօրս նշխարքն ամփոփուած են:

Ո՛վ Եէնիքէօյ, քանի՛օն դառն և քանի՛օն քաղցր ես: Դո՛ւ զմայրս կ'օթեւանես, բայց զմայրս որ ոչ եւս պատասխան կուտայ իմ որբացեալ սիրոյ հառաչանացս:

Մտայ եկեղեցւոյն դռնէն, վեր ելայ սանդղակներէն, և առանձնացեալ դարստափի վրայ . . . յանկարծ, ո՛վ Աստուած իմ, տեսութեանս ներկայացաւ . . . :

Անկայ, մայր, տապանիդ զրայ, և փարեցայ զհողովդ: Սիրտս, կարօտ քու տեսոյդ, յուսահատօրէն տենչաց զքեզ: Բայց մահն իմ անողոր թշնամիս, իրեն յատկացուց բոլոր կոծերս, բոլոր արտասուքս, բոլոր յու-

սահառութիւնս , և ոչ կարեկցութեան շունչ մ'երևա գերեզմանիդ մէջէն :

Քառասուն ու վեց օրերէ ի վեր . յուսացի , զի հէքս կը կարծէի սիրտիլ , մխիթարուիլ սուրբ հոգի համբուրելով : Բայց որչափ մեծ ակնկալութեամբ եկայ , նոյնչափ սգահար , նոյնչափ ողորմելի մեկնեցայ քեզմէ , մայր . հոգւոյս վերջն առաւել բացուեցաւ , արիւնեցաւ , քանի որ շատ իսկ համոզուեցայ թէ ոչ ուրեք կայ ինձ համար մխիթարութիւն , զի աչերս ոչ ուրեք կը տեսնեն զքեզ , ականջներս ոչ ուրեք կը լսեն ձայնդ , բերանս ոչ ուրեք կը համբուրէ ձեռքդ , զի ոչ ուրեք ես վերջապէս . . :

Սալատ' ինձ , մայր , զի ի կեանս ինչպէս և ի մահ անբաժանելիդ եմ ես :

ՍՐԲՈՒՀԻ ՏԻԻՍԱՐ

1/13 սեպտ. 1884

ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹԻՒՆՔ

ԿԱՆԱՆՅ ԴԵՐԸ ԸՆԿԵՐՈՒԹԵՆ ՄԷՋ

Ե .

Կանանց վիճակն և ազդեցութիւնը Եւրոպական ազգաց մէջ , դպրութեանց և արուեստից վերածընդեկեան միջոցին — Կանանց դերն 17րդ և 18րդ դարուց մտաւորական և բարոյական յառաջդիմութեան մէջ , — Ռամպոլէ մարքիզոնէն : — Ֆրանսայի Ա. կաղեմիային հաստատուելը :

Միջնադարեան հաստատութեանց Եւրոպական ազգաց կանանց վիճակին բարւոքման մասին ըրած ազդեցութեան մէջ , կը նշմարուի թէ Աւատապետութիւնն եւ մասնաւորապէս Աստիտական հաստատութիւնը մարդկային ազգի մայրն եղող գեղեցիկ սեռին դիրքը բարձրացնելով հանդերձ , բարուց խանութարման տարօրինակ վիճակ մը արտադրած էին , որն որ խաւարին մէջ սընանող , անձնատէր և կեղծաւոր դատարարակութեան մը արդիւնքն էր :

Սոյն վիճակն գրեթէ կը շարունակուի Ուսմանց և Արուեստից վերածննդեան միջոցին , որ Բիւզանդեան կայսրութեան կործանման թուականէն կ'սկսի (1453) :

Պատկերհանութեան , քանդակագործութեան , ճարտարապետութեան , միով բանիւ գեղարուեստից բոլոր ճիւղերուն մէջ , վերածննդեան միջոցին արտադրեալ բոլոր երեւելի գործոց վրայ , կարծես . թէ մարդկային հանձարն մի միայն կէտ նպատակի ունեցած է զկանայս իստաւորել :

Միւսնոյն դիտողութիւնը կրնամք ընել այն ժամանակի դրաղիտութեան մասին : Միթէ Ժ.Ջրդ դարու մէջ յօրինեալ արձակ կամոտադաշտեալ բանաստեղծութեանց գրեթէ բոլորն ալ կանանց դրուատիւքը լեցուն չէին :

Երկուց սեռից հաւասարութեան կամ նախապատուութեան խնդիրն իսկ յուզուած է Ֆրանսայի մէջ , ճիշդ այն միջոցին յորում կանայք դրաղիտութեան զարդացման հետ բարուց բարեփոխութեանը աշխատած են , միւսնոյն փառօք և յաջողութեամբ : Օրինորդ . ար Կուռնէյ , Մօնդէնը փիլիսոփային բարեկամահին , արիարար պաշտպանած է այս դատն ի նպաստ իւր սեռին :

Սակայն նախ քան հետազօտելոյ այն փառաւոր դերն զոր կանայք ունեցան 17-18րդ դարուց մեծ տիեզերախաղին մէջ , պէտք է յիշեմք թէ ընկերական յարաբերութիւնը ինչ վիճակի մէջ էին , եւ այս մասին փոքրիկ ակնարկ մը Ֆրանսայի պատմութեան վրայ բաւական կ'ըլլայ զմեզ առաջնորդելու դէպի այն եզրակացութիւնն որ մեր հետազօտութեան նպատակակէտն է :

Յայտնի է թէ կանանց արքայական սըրահներու մէջ փայլին Ֆրանսայի Աննա թագուհւոյն (1484) օրովն սկսած է : Ֆրանսուա Ա. կ'ըսէր թէ « Առանց կնոջ պալատ մը « կը նմանի առանց դարնան տարւոյ մը կամ « առանց վարդի դարնան մը » :

Ըստ Սօվալի , որ Փարիզու Հնախօսութեան հեղինակն է , կանայք 17րդ դարուն մէջ սկսեւ են իրարու այցելութիւն ընել և արանց հետ ընկերակցիլ : Եւ միւս կողմանէ ալ Հիւէ , իմաստուն եպիսկոպոսն Ալբանշի , վիպասանութեան ծագման վրայ դրած մէկ հմտալից նամակին մէջ , կը յարէ թէ Ֆրանսացւոց քաղաքավարութիւնն արանց և կանանց իրարու հետ ունեցած սերտ յարաբերութենէն ծագած է :

Կանայք գրեթէ բանտարկեալ խալիոյ և Սօլանիոյ մէջ , այնչափ արգելքներով շրջապատեալ էին , որ անոնց հետ արք գրեթէ

բնաւ չէին կրնար խօսակցիլ: Աւստի նոցա մօտենալու համար, արք շատ մը դժուարութեանց յաղթելու յարկին մէջ կը գլուխ տէին, հետեւաբար փոխանակ քաղաքավարական ձեւերով յերկրեալ խօսակցութեան եղանակի մը պէտք զգալու, իրենց դէմն ելած արդեւքները բառնալու միայն կը տընէին: Իսկ ընդհակառակն, Ֆրանսայի մէջ, կանայք իրենց պատուոյն վրայ արձակ թողուած ըլլալով, առաքինութիւնն կամ պարզապէս սիրան էր նոցա միակ պահապանն, որ ամենէն զօրաւոր պատենէն է իր գական սեռին պատուոյն պահպանութեանը: պատենէն մը ապահովագոյն քան զամենայն բանալիս կամ վանդակս և հսկողութիւն խնամածութեան: Հետեւապէս արք պարտաւորեալ էին սոյն պատենէն քանդելու համար այնպիսի հնարագէտ ձեւերու կամ ոճերու տակ սքօղել իրենց դիտաւորութիւնն, որ կամաց կամաց արուեստ մը դարձած էր, անծանօթ ուրիշ ազգաց:

Նիւթ յարեմք սոյն նկատողութեանց այն պատկառանքն, որ կանայք ազգած էին իրենց սրտովն, դիւրաւ կրնայ մեկնուիլ թէ ի՞նչպէս կրցած են սովորութեանց, բարուց և հասարակաց կարծեաց վրայ այնպիսի ուժգնաբար ներշնչել գեղեցկին և բարւոյն ըզգացումն, և թէ ի՞նչպէս հաստատուած է Սալօններու ազդեցութիւնը:

Հենրիկոս Գի թագաւորութեան ատեն, ցորութիւնն ձակատն ի բաց կը վազէր արքայական պալատին մէջ: Տարփային զգացմունք ապերասան յայտարարութեամբ կը փոխանակուէին պալատական ակմբոց մէջ: Գայթակրութիւնն այն աստիճանի հասած էր, որ ինքնաձանաչութեան զգացումն ունեցող դաս մը ազնուական տիկնայք բոլորովին կը հեռանան պալատական ընկերութիւններէն: Սըքա կ'սկսին մասնաւոր ակումբներ կազմելով, համեստութեան և բարեկրթութեան ցոյցեր ընել պալատին դէմ, պղատոնական սիրոյ և հոգւոց լծակցութեան փափուկ զգացումները միայն արտայայտել իրենց ակումբներուն մէջ, միով բանիւ պարկեշտութեան և առաքինութեան հրահանգներ տալ ժողովրդեան:

Այս ընկերութիւններն, որք «Գրագիտական ակումբ» (Ռեֆրեմէն Լիթերէր) կը կոչուէին, խիստ փայլեցան ի Ֆրանսա 1770-

դարու մէջ ինչպէս յԱնգլիա: Սոցա ամենէն երեւելին և ազդեցիկն եղած է, ըստ կարգի նախապատուութեան, Ռամպուլէի ապարանաց մէջ կազմուած ընկերութիւնն, որ տխրեցական հռչակ մ'ունեցած է:

Այս ապարանքը ի սկզբան Բիզանի ընտանեաց ստացուածքն եղած է և նոյն անուամբ ձանչցուած: Իսկ երբ Բիզանի մարքիզին ազնիւը Պատարինէ տը Վիլլոն 12 տարեկան հասակին մէջ կ'ամուսնանայ Ռամպուլէ մարքիզին հետ, սոյն ապարանքին մէջ կը հաստատուի իւր բնակութիւնը, որ իւր անուամբ խիստ նշանաւոր կ'ըլլայ (1800):

Մարքիզուհւոյն պատկառանքն, իւր արժանապատուութեան զգացումն, և բնաւորութեան կանխահաս խոհեմութիւնն կը ստիպեն զինքն հեռանալ պալատական ընկերակցութենէն, ուր ո՛չ մեծութեան, ո՛չ ազնուութեան և ո՛չ ալ պարկեշտութեան կը հանդիպէին իւր աչերն: Կառանձանայ իւր ապարանքին մէջ, իւր միտքը միայն մշակելու կ'զբաղի, և մեծ փութով կը փնտռէ ծանօթանալ բոլոր երեւելի գրագիտաց և խնամանոց հետ: Հազիւ 20 տարեկան եղած ատենը, իւր ապարանքը Փարիզի մէջ գտնուած ամենէն ականաւոր և առաքինի անձանց ժողովատեղին կ'ըլլայ (1808), Մալէրայ, Ռաքան, Պալլադ, Շաբլէն, Վուազիւռ, Վօթըլա, Գոննէյլ, Լա Ռօշֆօրք, Ֆլէշիէ, Գօնտէ և այլն, մինչեւ իսկ Պօսիւէ որ 16 տարեկան եղած ատեն՝ Ռամպուլէի մարքիզուհւոյն ակումբին մէջ քարոզ մը կը խօսի:

Այս ակումբին մէջ կը ժողովուին նաեւ ժամանակին ամենէն ականաւոր տիկնաներն, Գօնտէի իշխանուհին, Սապլէի մարքիզուհին, Աբիւտէրի Օրիորդը, Լօնկվիլի դքսուհին, Կոմսուհին տը լա Սիւզ, տը Լաֆայէզ մարքիզուհին, տիկին տը Սէվինէ, և, և:

Այս ապարանքն կէս դարու մօտ Ֆրանսայի ընկերութեանց պարկեշտ մասին ապաստանարանն կ'ըլլայ, և ֆրանսերէն լեզուն բարեկարգելու զբաղելով, մեծապէս կը նպաստէ նորա կատարելագործութեանը, և միանգամայն ժամանակին բարուց ուղղութեան և քաղաքավարութեան հրահանգիչն կ'ըլլայ:

Ռամպուլէ մարքիզուհւոյն ակումբն այնպիսի համբաւ մը կ'ստանայ, որ բարուց, լեզ-

ուի և հասարակաց կարծեաց մէջ իւր յարուցած յեղափոխութիւնն խիստ օգտակար արդիւնք կ'արտադրէ, և ոչ միայն Փարիզ, այլ մինչեւ իսկ պալատը կը պարտաւորի յարգել նորա բարեփոխիչ վճիռներն, երբ Ֆրանսայի Ակադեմիան կը հաստատուի (1654):

Այս մեծ կաճառն գրեթէ իւր անդամոց ընտրեալոցն մասը Ռամպուլէյ մարքիզուհւոյն ակումբին մէջէն կը զատէ, ուր գրագիտական և իմաստասիրական վիճաբանութիւնք գիշերային հաւաքմանց գլխաւոր նիւթերն են եղած: Ամենայն խնամօք կը հետազօտեն լեզուին արտասանութիւնը փափկացնել, և միանգամայն խիստ նուրբ եւ քաղաքավար բացատրութիւններ գտնել ամեն տեսակ առարկայից կամ զգացմանց արտայայտութեան, միով բանիւ տիկնանց հաճոյ երեւալ, առանց դայթաւղեցուցիչ ցոյցեր կամ խօսքեր ընելու, որ ըսել է « ճշմարիտ զգացումն քօղարկել փափկութեան զիմակին տակ »:

Ռամպուլէյ մարքիզուհւոյն և իւր բարեկամներն փիլիսոփայութեան մէջ ալ նետուելով, մասնակցեցան այն ոգեպաշտական շարժման զոր Տէքարդ ներշնչեց 17Բ դարու գաղափարաց, և անտարակոյս իմաստասէր կանանց այս հակամտութիւնն մեծապէս նպաստեց այն բարեկարգութեան որոյ ինքնաբերաբար ձեռնարկած էին:

Ռամպուլէյ մարքիզուհւոյն երեկոյթներն մեծապէս նպաստեցին զգացումներն ու գաղափարներն ազնուացունելու, անբարոյականութիւնն արտաքսելու և գրագիտական ճաշակն ուղղելու, միով բանիւ ընկերութիւնն դէպի լաւն և դէպի գեղեցիկն առաջնորդելու: Նւ որովհետեւ կանայք էին գլխաւոր օրէնսդիրք, յամենայնի կը փայլէր ճարտարամտութիւն, ազնուութիւն, փափկութիւն և վայելչութիւն:

Այս ակումբին մէջ յաճախող տիկնայք կամ օրիորդք, Հազուադիւտք (Բէֆֆէօլ) կը կոչուէին, և ծնընդետաբ կամ հանճարով փայլող ամենէն համեստ կանայք սլափու կը համարէին այս տիտղոսին արժանանալու:

Այսպէս բարուց ազնուացման և լրջամիտ փիլիսոփայութեան մը տարածմանը մասին կէս դարէն աւելի իւր ծառայութիւններն մատուցանելէ ետքը, երբ կամաց կամաց կը

սկսի ցրուիլ Ռամպուլէյի ընկերութիւնը, մասնաւոր ակումբներ կը կազմուին նոյն նպատակաւ, ուրիշ համալսարան տիկնանց սրահներուն մէջ, զորս մի առ մի յիշատակելէ չներեր յօդուածիս շրջանակն:

Սակայն ասոնցմէ շատերն ամենայն ինչ ծայրայեղութեան տանելով, իրենց նախորդաց ազնուութեան և վայելչասիրական զգացումներն և վարմունքն արուեստակութեան և փաղաքշանաց կը փոխեն: Նւ ահա այն ստեղծ իրենց տիտղոսն ալ կը դադրի այլ եւս պատուաբեր ըլլալէ, և հապաքեալ կոչուին սլարգապէս իմաստակութիւն, թեթեւաբարոյութիւն կը նշանակէ: Միծաղելի կ'ըլլան յաշ ժողովրդեան լրջամիտ դասուն և Մոլիէր խիստ նուրբ քննադատութեամբ կը նշաւակէ այս երկրորդ կարգի հազուագիւտներն, մասնաւոր թատերախաղի մը մէջ, որ Լէ Բէֆֆէօլ Ռէֆֆէօլ կը կոչուի:

Անուրանալի ճշմարտութիւն մ'է թէ ո'չ միայն Ֆրանսայի այլ և Անգլիոյ, Գերմանիոյ, Իտալիոյ և մինչեւ իսկ Ներոպայի հիւսիսային գաւառներուն մէջ, 17Բ և 18Բ դարուց արտադրած ամենէն նշանաւոր գործոց ներշնչուն եղած են կանայք, ինչպէս նաեւ Լուդովիկոս Ժ. Ի ժամանակին մեծութեանը ամենայն զօրութեամբ աջակցած:

Այս տիեզերահռչակ թաղաւորին իշխանութեան միջոցին, որոյ անուամբ կը յիշատակուի իւր դարն, ամենայն ինչ կանանց կարեւորութիւն ընծայելու նպաստած է, ամենայն ինչ սիրոյ օգտաւէտ կամ վնասաբեր շնչովն ոգեւորած է, զի պատմութիւնը կ'արդարացնէ այն առածը, որ կ'ըսէ թէ « Նինն հրեշտակ մի է, որ կամ բարիք կը խորհի և կը գործէ, կամ չարիք »:

Հոգին մարմնոյ պէս զօրացուցիչ ոյժի մը պէտք ունի, որոյ սնունդը գիտութիւն, պատմութիւն և բանաստեղծութիւնն ըլլալը չուրացուիր: Ուրեմն մարդկութեան երկուց սեռից անդամներն հաւասարապէս ի բարին նշանաւոր կ'ըլլան, երբ մտաւորական կարողութեան կամ տաղանդի հետ բնապէս կամ ստացաբար սրտի ազնիւ յատկութիւններով օժտեալ են:

Ի սկզբանէ աշխարհի իրենց ազդեցութիւնն ի բարին կամ ի չարն գործածող կանանց պատմութիւնն մեծահատոր մա-

տենից նիւթ կը մատակարարէ : Բաց աստի մեր հետազոտութեան նպատակն համա-
ւաւոր կանանց նկարագրութիւն ընել չէ ,
այլ յընթաց մարդկութեան կազմեալ զա-
նազան ազգաց բարոյական և մտաւորական
զարգացման մասին , կանանց ազդեցութիւնն
ինչ եղած ըլլալն որոնել , ուրկէ միայն պի-
տի կարենալը եզրակացնել թէ , ի՞նչ պէտք
է ըլլալ իրենց դերն ընդհանրապէս ընկե-
րութեան մէջ : Ուստի հարկ անհրաժեշտ կը
համարուի հրաւիրել մեր ազնիւ ընթերցող-
ցողներն համառօտ տեսութիւն մ'ընելու
նոցա գլխաւորներէն գոնէ մէկ քանիին վը-
րայ , որք յաջորդ յօդուածին առարկայն
պիտի ըլլան :

ՏԻԳՐԱՆ ԵՈՒՍՈՒՖԵԱՆ

Մ. Ա. ՍՏԱ

Տժգոյն աստղիկ գիշերուան , պատգամաբեր հեռաւոր ,
Որու ճակատն ամբառնայ արեւմտեղէն շողշողուն ,
Պայծառ երկնից դրկին մէջ քու պալատէդ լուսաւոր
Ի՞նչ կը դիտես մէջ դաշտերուն :

Արդ հեռացաւ փոթորիկն , հողմունք ահա դադրեցան ,
Դողդոջ անտառն արտասուէ թաւուտին վրայ սե-
ւաթոյր ,

Եւ փոստուայն ոսկեղօծ յիւրըն թեթեւ արշաւան
Թեւածէ ' նդ մարդս անուշաբոյր :

Ո՛հ , ըսէ , ի՞նչ կ'որոնես վերայ ննջող այս երկրիս ,
Բայց խոնարհիս դու ահա դեպի լեռանց այն գօտի .
Մեղամաղձոտ բարեկամ , այլ ժպտելով կը սահիս ,
Եւ քո նայուած պաղպաղուն իսկոյն պիտի շրջանի :
Ո՛վ դու աստղիկ որ կ'իջնես կանաչագեղ բլրին վրայ
Տեւոր արտօսք արծաթեայ երկրոյեան ծածկութիւն ,
Դու որ տեսնես հեռուէն զուարթ հովիւն որ կուգայ
Մինչդեռ իւր հօտք քայլ առ քայլ իւր ընթացից հե-
տեւին :

Գիշերոյս մէջ անասման դու ո՞ւր կ'երթաս ո՞ւր աստղիկ
Ափանց վերայ մի մահիճ եղեգա՞նց մէջ որոնել :

Այդքան չքնաղ ո՞ւր կ'երթաս դու ի ժամուս այս
Ընկ

Ջուրց անյատակ դրկին մէջ զերթ մարգարիտ ան-
կանել :

Ա՛հ , թէ պարտիս մեռանիւ և թէ սիրուն քո գլխիկ
Պետի սուղէ ծովուն մէջ խարտիչա՞նկ իւր վարսեր ,
Ո՛հ , դեռ զմեզ չձգած , խնդրեմ , կեցիւր մի վայրիկ ,
Ո՛վ դու աստղիկդ քիչոյ այդ երկնքէդ վար մ'իջներ ,
Թաքե՛՛

Ա. Ա. Տ. Տ. Մ. Մ. Ս.

Ե. 2.

ՔԱՂՈՒԱԾ

ՇԱՔԱԹԱԿԱՆ ԼՐՈՑ

20-26 ՀՈԿՏԵՄԲԵՐ

Ա Ր Տ Ա Ք Ի Ն

Լորտ և Տիկին ՏըՖրին Հնդկաստան եր-
թալէ առաջ , ըստ խնդրանաց Թագուհւոյն ,
այցելութիւն տուին Նորին Վեհափառու-
թեան , որ երեք օր իւր Պալմորալի դղեկին
մէջ վար դրաւ զանոնք :

— Հնդկաստանի և Պելուճիսդանի սահ-
մանադիւտց միջեւ Զօսլի հովտին մէջ զօ-
րաւոր ցեղ մը ասկէ առաջ Անգլիացւոց
և Պելուճիսդանի իշխանութեանց դէմ ըմ-
բոստացած լինելով , Անգլո-Հնդիկ կա-
ռավարութիւնը զօրախումբ մը դրկած էր
անոր վրայ : Արդ , Սիմլայէ կը հեռագրուի
թէ , Թաննըր զօրավարի հրամանաց ներ-
քեւ դառնալով այս զօրախումբ առաջին
անգամ լինելով հոկտեմբեր 25ին բախեր է
Քահարի ցեղէն 500 զինեալ մարդոց , զորս
ի փախուստ դարձուցեր է , 50 մարդ վիրա-
ւորելով կամ սպանելով : Իսկ անգլիացւոցմէ
5 հոգի միայն վիրաւորուեր են :

— Անգլիոյ երեսփոխանաց Ժողովը դեռ
հոկտեմբ. 29ին չէր աւարտած Թագուհւոյն
ճառին ի պատասխան ներկայելի Ուղերձի
վրայ ընդհանուր վիճանանութիւնն , որ ա-
ռիթ ընծայած է ընդդիմադիր կուսակցու-
թեան՝ աշխարհի չորս կողմէ Պ. Կլատտոնի
նախարարութեան բռնած ընթացքը քննա-
դատելու երկարօրէն , և նախարարութեան
ալ իւր ամեն արարքն արդարացնելու : Մեծ
վիճաբանութիւն մը կը սպասուի նաև Ընտ-
րական Ծրագրոյ երկրորդ ընթերցման առ-
թիւ : Իսլանտացիք որոշեր են Պահպանողա-
կանաց հետ միանալով Պ. Կլատտոնի ծրա-
գրին հակառակ քուէ տալ , զի տեղի ունին
եղեր վտանալու Նախարարութեան Իսլան-
տայի նկատմամբ հետեւած ընթացքէն :

— Լորտ Նորթպրուք , որոյ եգիպտոսէն
մեկնիլը ծանուցած եմք արդէն , նոյեմբեր
1ին Բարիդ հասաւ և Լոնտոն պիտի ուղե-
ւորի : Անգլիական բարձր Գօմիսէրը տեսակ-
ցութիւն մ'ունենցաւ Պ. Ժիւլ Ֆէրրիի հետ :

— Թայմը կը ծանուցանէ թէ Ֆրանքօ -

չինական խնդրոյն մէջ անգլիական միջամբ-
տութեան մը զրոյցք կը հաստատուին :

— Ի Լոնտոն , Հայտ-Բաւքի զբօսավայ-
րին մէջ նոր ցոյց մ'եղաւ Լորտերու ժողովոյն
դէմ . հարիւր հազար անձինք մասնակցե-
ցան : Սոքա խումբ խումբ գնացին Միդլինկին
վայրը , նուագարաններով և դրօշներով և
թափօր կազմած : Քուէարկեալ որոշմունք կը
յայտարարեն թէ Լորտերն անօգուտ են ,
վտանգաւոր են , և պէտք է ջնջուին : Այդ
ահագին բազմութիւն գումարեցաւ , խոր-
հըրդակցեցաւ և ցրուեցաւ կատարեալ խա-
ղաղութեամբ :

— Անցեալ շաբթու մէջ Հինգ Աղատա-
կանաց Լորտութեան աստիճան տրուեցաւ :
Թէեւ տակաւին վերջնապէս յայտնի չէ թէ
Պ. Կլաւտոն ինչ յատակագիծ ի դործ պի-
տի դնէ Լորտերու բնարութեան յաղթելու
համար , բայց կերեւի թէ Լորտերու ժողո-
վոյն ազատական անդամոց թիւը բազմա-
ցընելու եղանակն ալ պիտի փորձէ :

— Լէոն Ժ. Պապը քանի մ'օրէ հետէ
կաշխատի ընդարձակ ու մեծադ զորդ Շրջա-
բերական մը խմբագրելու , որով ազդուա-
պէս պիտի բողբէ եղեր ժամանակիս ազա-
տական ուղղութեան դէմ :

— Եգիպտական Կապոյտ Տէտրակէն կը
տեղեկանանք թէ , Անգլիական կառավարու-
թիւնն հրահանգ տուած է Ուոլթի զօրավա-
րին՝ ազատել Կորտոն զօրավարը , Սգուարդ
գնդապետն և խարդուկի պահապան զօրքն :
Անգլիոյ կառավարութիւնը կը փափագի որ
խարդուկ անկախ լինի Եգիպտոսէն : Խտի-
վին կառավարութիւնը դրամական նպաստ
մը պիտի տայ այն ցեղապետի կամ կառա-
վարչի , որ հանդարտութիւն և բարեկար-
գութիւն պահպանէ Վատի — Հալֆայի եւ
խարդուկի միջեւ գտնուած երկրին մէջ , սա
երեք պայմաններով . Եգիպտոսի հետ հաշտ
մնալու դաշնադիր մը ստորագրէ , վաճա-
ռականութիւնը քաջալերէ եւ գերեզմանոն
արդիւնէ : — Կլաուի թէ այս պաշտօնին պի-
տի կոչուի Տոնկոլայի հանրածանօթ կառա-
վարին , հնգամեայ պայմանաժամով :

— Կատարելապէս ստուգուած է այժմ
թէ Սգուարդ գնդապետն եւ խարդուկի
Փրանսական եւ հելլենական հիւպատոսք
աստտամբաց ձեռամբ քարդուեր են :

— Վիէննայէն հոկտեմբեր 27 թուով կը

հեռագրուի առ Թայմը . Նիշէ կը ծանուցուի
թէ Վէլէսի (Քէօիբիւլիւ) ալպանիացի ժո-
ղովուրդն ոտք ելեր է , Նէղիլովօ գիւղին
վրայ յարձակեր է , հրկիւղեր է զՏոչքէնիլիս-
տէ և Տառէսէզ , յաւար առնելով տուներն
և բնակիչներ սպաննելով :

— Ֆրանսական կառավարութիւնն որո-
շեց Սրուեստահանդէս մը կազմել ի Բարիզ
1889ին , և առ այս ընդհանուր Քովիսէր
կարգեց Երեսօխոսան Պ. Բրու :

Ն Ե Ր Ք Ի Ն

Ռուսիոյ Վեհ. Զարին կողմէ Օգոստա-
փառ Սուլթանին ընծայեալ պատուանշանին
մատուցման հանդէսը կատարուեցաւ այս չո-
րեքշաբթի մեծ շքով : Նորին Վեհափառու-
թեան առաջին թիկնապահ Մէհմետ փաշա
և արտաքին գործոց պաշտօնատան արարու-
ղապետ Խալաֆիմ օլէյ դեսպանատունը գնա-
ցին արքունական կառքերով և Երլտըզի պա-
լատը բերին դեսպանն ու դեսպանական-
ներն : Պ. Նէլիտօֆ քառածի կառք մը նըս-
տած էր իւր հետ ունենալով Մէհմետ փա-
շան : Յաջորդ կառքին մէջ կը գտնուէր դես-
պանատան խորհրդական Պ. Օնու , որ շքա-
նշանը կը կրէր : Ապա կուգային միւս կառ-
քերը :

Երբ Երլտըզի պալատան առջեւ հասան ,
կայսերական նուագածուաց խումբը Ռու-
սաց աղղային երգը նուագեց : Դեսպանն
անմիջապէս գահոյից դահլիճն առաջնորդը-
ւեցաւ , ուր կեցած էր Օգոստ. Սուլթանն ,
չուրջն ունենալով նախարարներն եւ պալա-
տան բարձրաստիճան պաշտօնատարներն :
Պ. Նէլիտօֆ դէպ ի Սուլթանն յառաջացաւ ,
աջ կողմն ունենալով զՊ. Օնու որ կարմիր
թաւշեայ բարձի մը վրայ կը կրէր Ս. Անտ-
րէայ խաչի մեծ պատուանշանն՝ կապոյտ
ժապաւէն մը ուսկից կախուած էր աղա-
մանդազարդ արծիւ մը , ականակուռ չրջա-
նակի մը վրայ . ձախ կողմը կեցած էր ա-
ռաջին թարգման Պ. Իվանօֆ : Դեսպանը
Նորին Վեհափառութեան մատուց Չարին
ինքնագիր նամակը , և պատուանշանն յանձ-
նելէ առաջ Փրանսերէն լեզուաւ բանախօ-
սութիւն մ'արտասանեց , զոր թուրքերէնը

Թարգմանեց արտաքին գործոց նախարար Ասիմ փաշա: Նորին Վեհափառութիւնը դեսպանին պատասխանեց Թուրքերէն լեզուաւ զոր Քրանսերէնի Թարգմանեց նոյնպէս Ասիմ փաշա:

Ապա դեսպանն ու դեսպանականը սլաւաւորան սրահին մէջ հանդստանալէ եւ մեծարուելէ յետոյ, Բերա վերադարձան միւս եւնոյն հանդիսիւ:

Ս. Անտրէայ պատուանշանը ռուսական ամենէն բարձր պատուանշանն է, զոր իրր երկու դար առաջ հաստատած է Մեծն Պետրոս: Ս. Անտրէայ Ռուսիոյ սալապան Սուրբն է, ինչպէս նաեւ Սկովորոյ, եւ Ս. Անտրէայի սկովորական պատուանշանն ասպետական տարեգրութեանց մէջ հնազոյնն է: Այս պատուանշան կը տրուի միայն Ռուսիոյ արքունական ընտանեաց անդամոց, օտար վեհապետաց, եւ այն իշխանաց կամ զօրավարաց միայն որք արտասովոր կերպիւ նշանաւոր հանդիսացած են: Ռուսիոյ Վայսրը Ս. Անտրէայի պատուանշանէն աւելի մեծ պատուանշան մը չունի ընծայելու:

— Յունաց Պատրիարքարանի Սինոդը վերջնապէս կազմուեցաւ իւր անդամոց կիսոյն նորոգմամբ, եւ ընտրուած են Կիլիքոնի, Ամասիոյ, Տէպրէի, Փիղադեդիիոյ, Մօկլէնօի, եւ Լիթիճիօի մետրապօլիտք, որոց հրաւէր զրկուած է անյապաղ Պոլիս գալ: Հրաժարեալ անդամք իրենց թեմերը կը վերադառնան, առանց սպասելու իրենց յաջորդաց գալտեան:

— Բ. Դրան եւ Պ. Հիրչի միջեւ դեռ համաձայնութիւն չգոյացաւ երկաթուղեաց միացման խնդրոյն վրայ: Բ. Դուռը զանազան պայմաններ դրած է Բուսէլիի երկաթուղիներն իւր ուղղակի իշխանութեան ներքեւ առնելու եւ շահերէն բաժին մը ստանալու հիման վրայ: Անցեալ շաբթուան տարածուած լրոց նայելով, Բ. Դուռը ծանուցած է Պ. Հիրչի որ եթէ մինչեւ նոյեմբեր 4 չընդունի իւր առաջարկած բոլոր պայմաններ, Բուսէլիի երկաթուղիք պիտի զրաւուին Օսմանեան իշխանութեան կողմէ: Խնդիրն այսպէս յոյժ փափուկ եւ կնճառ հանգամանք մը ստացած է: Աւստրիական դեսպան Պ. Քալիչէ, ծանուցադիր մը տալով Բ. Դրան, բողբեր է երկաթուղեաց գրաւման պատահականութեան դէմ:

— Եւմէնէն կը դրեն առ Թէրճէմանը — Հազիգաթ թէ ապստամբապետ Շէրէֆէտաին որջացեալ կը մնայ այն տեղն ուր ապստանեցաւ, ի Զաֆիր տեղի ունեցած ճակատամարտէն յետոյ. կայսերական զօրքը դեռ արշաւած չէ ապստամբաց վրայ: Տեղեկութիւն տրուած է նաեւ յիշեալ լրագիրն թէ նահանգին մէջ յաճախ երեւան ելած խռովութեան պատճառաւ արքունի արոց հաւաքման գործը դադարեցով, միլիոնաւոր պահանջք մնացած է եւ հետեւաբար 7-8 ամսէ հետէ թոշակ տրուած չէ պաշտօնակալաց:

— Մօնիթէօն Օրիանթալ լրագիրն որ նախ մէկ և ապա հնգամեայ դադարման դատապարտեցաւ, ներումն ստացած լինելով, երկու օրէ ի վեր սկսաւ հրատարակուիլ:

— Կ. Պոլսոյ անգլիական դեսպանը դեռ չորոշուեցաւ, բայց Լոնտոնի լրագիրք այս մասին երկու ընտրելեաց վրայ կը խօսին, մին է Սըր Էտուարդ Թօրնթօն, Բեդրսպուրկի դեսպանն, որոյ անունն արդէն յիշուեցաւ, միւսն է Լորտ Էտմընտ Ֆիճմօրիս, արտաքին գործոց խորհրդական:

— Հանրային շինուածաց նախարար Մէհմետ Բայիֆ փաշա՝ Օգոստ. Սուլթանին ներկայացաւ, ի շնորհակալութիւն իրեն շնորհեալ Վէլիքութեան աստիճանին համար:

— Կ. Պոլսոյ առեւտրական Սենատին ի մօտոյ պարբերական հանդէս մը պիտի հրատարակէ Թուրքերէն և Քրանսերէն լեզուաւ: Սոյն հրատարակութեան նպատակն է Թուրքիոյ արհեստական և առեւտրական զարգացման նպաստել:

— Եւրոպական նախարարութեան կողմէ հրահանգ տրուած է Օսմանեան Վայսերական Պանքային՝ ազդարարել լրագրաց միջոցաւ թէ խնդրոյ տակ եղող քօնսօլիտէներն երբ ներկայացուին յիշեալ Պանքային, անմիջապէս սլիտի վճարուին:

— Բէժիի ընկերութեան զեր-տնօրէն կարգուած են՝ օսմանեան ընդհանուր պարտուց վարչութեան քննիչ Հասան պէյ, և մաքսատան վերատեսչութեան խորհրդական Պէրթրամ էֆէնտի:

— Հալէպի ոստիկանութիւնը մեծ քանակութեամբ փախցուած ծխախոտ ձեռք անցուցեր է: Մաքսախոյրք բուռն ընդդիմութիւն ըրեր են ոստիկանաց և արիւնառչտ կռիւ մը ծագելով, մաքսախոյսներէն մին սպանուեր և մին ձերբակալուեր է:

Ա. Չ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Ազգային ժողովն այս ուրբաթ դուռնաբացեալ ի Ղալաթիա, ընդ աստուածայեան թեմայի Տիգրան էֆէնտի Եղեռնութեանի եւ յետ ատենական գործողութեանց, երբ կը պատրաստուէր Օրակարգին անցնիլ, Ատենայեան էֆէնտի յայտնելով թէ՝ տխուր պարտականութիւն մ'ունի կատարելիք, յոտն ելնելով, կարգաց Ամեն. Ս. Պատրիարք Հօր առ Ազգային ժողովն ուղղեալ մի գիրն որով կը հրաժարէր Պատրիարքական պաշտօնէն, իւր հիւանդութեան պատճառաւ: Հրաժարագրոյն կցուած էր Նորին Սրբազնութիւնը դարմանող հայ եւ օտարազգի բժշկաց մի տեղեկագիրն, որ կը հաստատէր թէ Ամեն. Ներսէս Սրբազան պէտք ունի կատարեալ հանգստեան եւ գործէ՝ քաշուելու:

Ժողովն ըստ օրինի հրաժարագրին յղեց Ատենայեանաց Դիւանին, որպէս զի հարկ եղած բացատրութիւնները վարչութիւնէն առնել յետոյ, իւր տեղեկագիրը բերէ յաջորդ նստին որ պիտի գումարի մէկ շաբաթէն:

Խառն ժողովն Երուսաղիմայ պարտուց բարձման եղանակին համար տեղեկագիրն յղած լինելով, որոշուեցաւ Օրակարգի երկրորդ խնդիր ընել զայն եւ նկատողութեան առնուլ դռնփակ նստի մէջ: Չերազ Մինաս էֆէնտիի առաջարկութեամբ, Օրակարգի երրորդ խնդիր ընդունուեցաւ կաթողիկոսական խնդիրը, նկատելով որ ընտրութեան թուականը կը մերձենայ:

Ժողովոյ փակման ժամն հասած լինելով, Թ. Պէկեան էֆէնտիի երեսփոխանական ընտրութեան վաւերացման խնդիրն յետաձգուեցաւ:

— Միացեալ ընկերութեանց Կեդրոնական ժողովը նիստ ըրաւ անցեալ կիրակի եւ գլխաւորաբար հետեւեալ խնդրովք զբաղեցաւ: Ընդունուելով դեր-նախագահ Արշակունի Յովհաննէս էֆէնտիի հրաժարականը, նորա տեղ ընտրուեցաւ Մանուկեան Մկրտիչ էֆէնտին: Ընդունուելով Տնօրէն ժողովոյ հրաժարեալ 5 անդամոց հրաժարականներն, անոնց տեղ նորեր ընտրուեցան: Ապա կարգացուեցաւ Տնօրէն ժողովոյ քառամսեայ գործառնութեանց տեղեկագիրն: Տնօրէն ժողովն իւր այդ տեղե-

կագրով կը գանդատէր թէ, բաժանորդագրութիւնք օր ըստ օրէ նուազելու վրայ են, մանաւանդ ի դաւառս, ի բաց առեալ Ռոտոդոյի մասնաճիւղն որոյ աշխատութիւնք գնահատելի են: Կը ծանուցանէր թէ՝ Ազգ. Հայուհեաց Քղիի վարժարանէն 2 շրջանաւարտ սանուհիք ելած են այս տարի, թէ Չմկիածագի ազգայինք Միացեալ ընկերութեանց հետ նոր պայմանագրութիւն մը կնքելով, խոստացած են տարուէ տարի 50ական ոսկի տալ, եւ յապահովութիւն, 1600 հատ Բոնսուլիտէ աւանդ թողած են: Քովանտըքի վարժարանը վերաբացուած է, եւ հրահանգ ղրկուած է ի Չէյթուն հրկիւեալ վարժարանին աշակերտներն հաւաքել ու վարժարան մը բանալ յարմար շէնքի մը մէջ: Տեղեկագիրն ի վերջոյ կը յաւելուր թէ ընկերութեան 84-85 տարւոյ երմոսացոյցը պատրաստուած եւ յանձնուած է Երմոսական Յանձնաժողովոյ, եւ թէ Միացեալ ընկերութեանց տարեկան տեղեկագիրը քիչ աւելնէն պիտի հրատարակուի: Սոյն տեղեկագիր ընդունուեցաւ շնորհակալութեամբ:

Ապա ժողովը լսեց Երմոսական Յանձնաժողովոյ տեղեկագիրն որ կը յայտնէր թէ ընկերութեան այս տարուան հասոյթից գումարը կը սասնէր 3134 ոսկւոյ 79 1/2 զրուշի: Խի ծախուց գումարը 3413 ոսկւոյ 27 զրուշի (ի միասին հաշուելով 390 ոսկւոյ եւ 86 զրուշի պահեստի գումարն), որով ընկերութեան ներկայ նստաշրջանի բացն է 278 ոսկի 47 1/2 զրուշ: Յանձնաժողովն իւր տեղեկագրոյն մէջ գովեստիւք կը խօսէր Ազգ. Հայուհեաց եւ Բարեգործական ընկերութեանց, ինչպէս նաեւ Սովետոյ Յանձնաժողովոյ եւ այն ամեն ազգային մարմնոց վրայ յորոյ միշտ աջակցութիւն գտած են Միացեալ ընկերութիւնք: Մասնաւոր շնորհակալութեամբ յիշատակուած էր Աղա Սանասարեան, զի անունն: Սոյն տեղեկագիրն իւր ամբողջութեամբ ընդունուեցաւ ժողովոյ կողմէն: Ի վերջոյ Յանձնաժողով մը կազմուեցաւ 83-84 տարւոյ հաշիւները քննելու պաշտօնով:

— Նախընթաց օրը Պաղատատէն հեռագիր մը հասաւ Պատրիարքարան, որով կը գանգատին տեղւոյն փոխառաջնորդ Նաճառեանց Գեր. Տ. Փիլիպպոս եպիսկոպոսի դէմ, ծանուցանելով թէ ազգային ժողովները ցրուած է:

Այս դանդաղորդ Պատրիարքարանէն հեռացրաւ հաղորդութիւնը՝ Ն. Գերապատուութեան, բացատրութիւն ուղղեցաւ :

— Կրօնական ժողովն երկուշաբթի շաբաթական նիստն ըրաւ, և մասնաւոր խընդրովքը պարզեցաւ :

— Ըստ որոշման Խառն ժողովոյ՝ աղգային դիւանատունը կը պատրաստէ Ամասիոյ և Մարգարտու առաջնորդ Խօտտամեան Գերոս. Պօղոս վարդապետի պաշտօնագրերն, որպէս զի փութայ ուղեւորիլ ի պաշտօնատեղին :

— Մուշէն և Բաղէշէն առնուած հաւատարի տեղեկութիւնք կը յայտնեն, թէ վերջերս տեղական կառավարութեանց կողմանէ կարգեալ պաշտօնատարք սկսած են՝ անցեալ տարի Մշոյ մէջ ամուսնացող հայերէն 8 զորւի տուրք մը հաւաքել եւս — քառասունութ անգամ : Իսկ ի Բաղէշ՝ հրահանգ տրուած լինելով ասկէց յառաջ տեղւոյն և չըմկալից բահանաներուն՝ հրաման առնուլ նախապէս ամուսնութեանց համար տեղւոյն Էմիաքի տեսչութեան կողմանէ, այս անգամ սկըսուած է ի դործ դնել սոյն տնօրինութիւնն, և ամուսնացեալ անձ մ'իսկ՝ անհրաման պըսակուելուն համար՝ բանտարկուեր է, և 20 զրի տուգանք մը վճարելով՝ բանտէն արձակուեր է :

Արդարեւ անցեալ տարի Բ. Դուռը գըրեց, ինչպէս մեր նոյնպէս և ուրիշ հպատակ ազգաց Պատրիարքարաններուն, որ ամուսնութեանց համար նախապէս հրաման առնուի թաղապետութիւններէ, որպէս զի մարդահամարի արձանանագրութիւնք կատարեալ վիճակի մէջ գտնուին. սակայն մեր Պատրիարքարանի դիտողութեանց վրայ՝ Կայսերական կառավարութիւնն ապա հաճեցաւ տնօրինել, որ Պատրիարքարանը ամսէ ամիս Քաղաքապետութեան տան ամուսնացողաց ցուցակն. և ահա բաւական ժամանակէ հետէ ըստ այսմ կը վարուին Պատրիարքարանք :

Արդ՝ կը կարծեմք, թէ այս վերջին կարգադրութիւնն ի սկզբան անդ հաղորդուած չէ գաւառական իշխանութեանց, և նոքա տակաւին կը վարուին՝ իրենց տրուած առաջին հրահանգին համեմատ, և ինչպէս կերեւի ի Մուշ և ի Բաղէշ ամենայն խստութեամբ : Տարակոյս չունինք, թէ Կայսերա-

կան կառավարութիւնն արդէն իմացած լինելով եղածները՝ շնորհ ըրած է այժմ ըստ վերջին տնօրինութեան հրամաններ ուղղել առ գաւառական իշխանութիւնս :

— Այս չորեքշաբթի օր թէ՛ Քաղաքական և թէ՛ Խառն ժողով գումարեցաւ :

Քաղաքական ժողովոյ տնօրինութեանց կարգէն են հետեւեալք .

1.— Ժողովն ուշադրութեան առեր է գաւառներէն եկած քանի մը գրեր, որովք ծանուցուած է թէ տեղական իշխանութիւնք սկսած են կրթական տուրք հաւաքել Հայերէն ալ :


2.— Գատըգիւղի և Գընայը կղզւոյ Թաղական խորհրդոց հրաժարականներն ընդունուելով՝ նոր ընտրութեանց հրահանգ ղրկուեր է :

3.— Հարկ համարուեր է դադարեցնել Պալատու առժամանակեայ Թաղական խորհուրդն, եւ նոր ընտրութեան հրահանգ ղրկել :

Սակայն Խառն ժողովոյ տնօրինութեանց վրայ բնաւ տեղեկութիւն չը տրուեցաւ : Մէք մասնաւորապէս ծանօթութիւն առինք, թէ Խառն ժողովն երկու ժամու չափ ըզբաղեր է Պատրիարքական տեղապահի, կամ լաւ եւս է ըսել՝ Պատրիարքական հրաժարականի խնդրով, և կարգացուեր են յատենի ժողովոյն՝ Ամեն. Ս. Պատրիարք Հօր կողմանէ առ Բ. Դուռն և առ Աղգային ժողովն ուղղելի հրաժարագրոց պատճէնք : Մէք մասնաւորապէս ծանօթութիւն առինք նաեւ, թէ եկեղեցական եւ աշխարհական ժողովականաց ոմանք բաւական ծանր դիտողութիւններ ըրեր են՝ անցեալ չորեքշաբթի Քաղաքական ժողով չգումարուելուն, և Պատրիարքական հրաժարականի խնդրոյն պարագայից գաղտնի պահուելուն համար :

ՄԱՏԼԷՆԻ ՄԵՂԲԸ

Տեղւոյ անձկութեան պատճառաւ չկրցանք հրատարակել այս անգամ «Մատլէնի Մեղքը» : Յառաջիկայ թրւոյն մէջ վերջին մասը պիտի հրատարակենք ամբողջովին :



Հ Ա Ն Գ Ի Ս Տ
Տ Ե Ա Ռ Ն Տ Ե Ա Ռ Ն Ն Ե Ր Ս Ի Ս Ի
ՍՐԲԱՂԱՆ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍԻ
ՊԱՏՐԻԱՐԿԻՆ Կ ՊՈԼՍԱՅ

Անբացատրելի ցաւով կը ծանուցա-
 նենք թէ ԱՄԵՆ. Տ. ՆԵՐՍԷՍ Ս. Պատ-
 ռիարք Հայրն երեկ ժամը 6 ին ի Տէր
 Հանգեաւ յՕրթագիւղ իւր տան մէջ :

Ն. Սրբաղնութիւն մի քանի օրէ հե-
 տէ բաւական հանգիստ վիճակի մէջ
 էր , որ յոյներ կը ներշնչէր իւր բաղ-
 մաթիւ քարեկամաց , որք բոլորովին
 վերջ գտած կը համարէին Ն. Սրբաղ-
 նութեան վերջին ժամանակներս ան-
 ցուցած տաղնապները :

Թէեւ հիւանդութիւնը վերջ գտած
 չէր , բայց մօտաւոր վախճանի մ'ալ
 երկիւղ չի կար : Դեռ այս առաւօտ ,

Նորին Սրբաղնութեան վիճակն անմի-
 ջական երկիւղ չէր աղբեր :

Բայց այնպէս է մարդկային ճակա-
 տագիրն , որ այն պահուն որ Ն. Սրբ-
 բաղնութեան հրաժարագիրը կը կար-
 դացուէր Ազգ. ժողովոյն մէջ , և շատ
 երեսփոխաններ , Ն. Սրբաղնութեան
 համակրողներ , արամադիր էին Ն. Սրբ-
 բաղնութեան հրաժարականն ընդու-
 նել՝ կեանքն այսու երկարելու յուսով ,
 ինքն իսկ իւր դժնդակ հիւանդութեան
 մէկ նոր յարձակումը կը կրէր , յորմէ
 դժբախտապէս այս անգամ չէ կրցած
 զերծանիլ :

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԻՔ

ՄԻԱՅՆԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՑ ՀԱՅՈՅ

— 0 —

Փ. ՓԵՐՁԵԱՆ

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՐՀՍԲԱՐ ԼԵՂՈՒ

312 հրահանգք լեզուի եւ մտածողութեան

Ներդրող Տարագրութիւն

Գին 6 դահեկան արծաթ

Շատ գնորդներու համար մասնաւոր շեղք կը լինի :

Կը գտնուի բոլոր գրավաճառաց քով : Կեդրոնատեղին է Հայոց Միացեալ Ընկերութեանց գրասենեակն, Կոլաթա, Կէօյէ — օղլու խան, թիւ 12 :

— 0 —

Ծանօթ. — Հայոց Միաց. Ընկերութեանց նկիւքը չկրող օրինակներն անվաւեր են :

ՊԱՐԶ ՕՐԱՑՈՅՑ

1885 ՏԱՐԻՈՅ

Սեփականութիւն

Ս. ՓՐԿՁԻ ԱԶԳ. ՀԻՄՆԴԱՆՈՅԻ

Գին Մէկ դահեկան

Կը գտնուի ի Մեծ Նոր խան, միջնայարկ թիւ 49, Հիւանդանոցի Հոգաբարձութեան գրասենեակը և բոլոր Հայ գրավաճառաց քով :

«ՈՍԿԻ ՄԱՏԵՆԻԿ ՄԱՆԿՏԻՈՅ»

Թ. Թերզեան էֆէնտիի սոյն փրանսերէն դասագիրքն, որ տպագրուած է ի Փարիզ, Հաշիթի տպարանը, պատկերազարդ ընտիր ընթերցարան մէջ, որ կրնայ մեծապէս օգտակար լինիլ մեր ազգային վարժարանաց, թէ նիւթոց ընտրութեամբն և թէ դիւրամատոյց ոճովն :

Վաճառման կեդրոնատեղին է Բերա, Վայսի գրատունը, Գին 10 դահեկան :

ԱՄԵՆԱԿԱՐԵՒՈՐ ԱԶԳ

Ստորագրեալ պատիւ ունի ծանուցանել Արդոյ Հասարակութեան թէ, յառաջիկայ 1885 տարուոյ Ս. Փրկչի Ազգ. Հիւանդանոցին սեփականեալ ընդարձակ օրացոյցին մէջ պիտի զետեղուին ամէն տեսակ ազգեր իբր յաւելուած :

Ներկայ ծանուցմամբ կը հրաւիրուին վաճառականք, գործարանատեարք, սեղանաւորք, արհեստաւորք, դեղագործք, փաստաբանք, այլ և այլ ընկերութեանց Կ. Պօլսոյ դիրժակաք, զանազան հաստատութեանց վարիչք և առւտրական ամէն ճիւղերու վերաբերեալ անձինք, որ կը փափաքին իւրեանց գործոց վրայ աղքատաբութիւն ընել յիշեալ ընդարձակ օրացոյցին մէջ դիմել առ

Գ. ՊԱՂՏԱՏԼԵԱՆ

Տնօրէն Արամեան տպարանի,

Յակօբեան խան, թիւ 13 :

Ազգարարութիւնք պիտի ընդունուին մինչեւ յառաջիկայ նոյեմբեր 10 :

Պայմանք գոհացուցիչ են :

ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆԲԱՆ

ՎԻՃԱԿ Ի 30 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1884

ՊԱՀԱՆՋՐ

	ԴՐՈՒՄ
Բաժինք չգանձուած	550,000,000
Սնտուկ Ի Կ. Պոլիս	46,145,588 16
» Ի մասնաձիւղս	56,587,954 4
Գանձելի փոխանակագիրք	454,765,696 3
Ընթացիկ հաշիւք Կայսերական գանձուն — պարտական	587,501,832 29
Ընթացիկ հաշիւք զանազանք — պարտական	304,745,773 20
Փոխատուութիւնք արժեթղթոց և վաճառաց վրայ	122,744,747 20
Անշարժ և շարժական գոյք	8,845,835 5
Զանազանք	4,765,256 27
	<u>2,095,898,461 4</u>

ՊԱՐՏՔ

	ԴՐՈՒՄ
Դրամագլուխ	1,100,000,000
Պանդտունք Ի շրջաբերութեան Ի Կ. Պոլիս	51,787,800
» Ի մասնաձիւղս	
Վճարելի փոխանակագիրք Ի մասնաձիւղս	101,731,177 29
Ընթացիկ հաշիւք Կայսերական Գանձուն — պահանջող	2,827,691 54
Ընթացիկ հաշիւք զանազանք — պահանջող	451,871,779 54
Դրամական աւանդք որոշ պայմանաժամով	75,885,151 25
Պահեստք զանազանք	281,045,471
Վճարելի շահաբաժինք	1,659,095
Զանազանք	51,092,294 2
	<u>2,095,898,461 4</u>

Վաւերացեալ ճշդութիւնն ըստ տուումարաց

Օգնական Տնօրէն
Ժ. ՖՕՆ ՀԱՍ

Տնօրէն
ԷՄ. ՏԸՎՈ

Գ Ո Ւ Ի Ն

ԱՆԳԼԻՍԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Հ Ր Դ Ե Հ Ի Դ Է Մ

ՌԸԼԻԷՆՍ

Ծովային ապահովագրութիւն : — Դիմել առ գործակատարն ընկերութեան, Պ. Ժ. Վ. Ուլիթալ, Եօրկիտալի խան Պահչէ — Գաբու, Պոլիս. կամ Դաւաթիա, Ալէքսիատի խան Թիւ 15 :

Արտօնատէր Կ. Ս. Իիթիիճեմն.
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼԻ ԼՐԱԳՐՈՅ